



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5746
5747
5748
5749
5750
5751

U. S. G. S. 1871

U. S. G. S. 1871

U. S. G. S. 1871

891.994
U-50

U. S. G. S. 1871



ՌՌԻԲԷՆ ՈՐԲԵՐԵԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՅ ԾԱՂԻԿՆԵՐ

ՓՈՒՆՁ ԱՌԱՋԻՆ

ՈՏԱՆԱԻՈՐ ԵՒ ԱՐՁԱԿ ԳՐՈՒԱԾՔ



معارف نظارت جلیله سنک ۱۶۰۸ نومرولی رخصتیه
طبع اولنمشدر

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ


1893

Ռ Ո Ւ Բ Է Ն Ո Ր Բ Ե Ր Ե Ա Ն

831.99

և ք.

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Յ Ծ Ա Ղ Ի Կ Ն Ե Ր



Ո Տ Ա Ն Ա Ի Ո Ր Ե Ի Ա Ր Չ Ա Կ Գ Ր Ա Ի Ա Ծ Ի



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

—
1893

1688

7548-079-

ԾՆՈՂՔԻՍ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Մանուկ մ'էի ես անմեղին ու փափուկ ,
 Սակայն բաղդը թռնամի՛ էր ինձ վաղուց ,
 Որ ժպիտը դեռ չը տեսած խուսափուկ ,
 Արտասո՛ւք ինձի բաժին , մա՛ս թողուց . . . :


Երկնից վերեւ լուսնակ , արեւ փայլէին ,
 Ո՛հ , դե՛ռ յիշե՛մ , երբ մայրըս զիս կ'օրօրէր ,
 Երբ կուլա՛յի , ինքը կ'երգէ՛ր վշտագին ,
 Սակայն անցա՛ն , ո՛հ , շուտ անցա՛ն այն օրեր . . . :

Օր մ'յալ սարսո՛ւն մի զգացի ճակատիս վրայ ,
 Ցուրտ համբո՛յրը , սա՛ն կնիքն էր որբութեան ,
 Եւ՝ ուխտեցի , որ մինչ կեանքս կ'երերայ ,
 Նորա արցունք ու շա՛նթ լինիմ յաւիտեան . . . :

Եւ իմ կեանքին մէջը տոգոյն երազոց ,
 Եւ իմ սրտին արցունքներով եռացին ,
 Այս մատենկան կտորները վշտագոծ ,
 Որոց մէջ կան երգ ու արցունք միասին . . . :







ԿԵՆԱՅ ԳԳՈՒԱՆՔՆ ՈՒ ԶԶՈՒԱՆՔԸ

Երբոր փախայ ոչնչութեան մութ վհէն
Ժպտի՛լ, փթթի՛լ, սիրե՛լ եկայ յայս աշխարհ,
Գողտր հոգի մը առնելով անդ իւր գահէն
Ո՛հ յղացայ կեանքի գգուանքն բոցավառ:

Այլ, ո՛հ, յորժամ օրօրօցիս անմեղուկ
Յուսոյ տեղ սե՛ւ, ժպտի տեղ լաց գտայ ես,
Ի՛ երբ գտայ զիս ընդ սեւ բաղդով յեղյեղուկ
Ո՛հ յղացայ կենաց գգուանքն վշտակէզ...

Երբոր կենաց թերթիկներուն ՚ի մէջ սէր,
Ի՛ յանմեղութեան գտայ յոյսեր գոյնզգոյն
Ու երբ գտայ լոկ հաճոյքը ինձ ընկեր,
Ո՛հ, յղացայ կեանքի գգուանքն սիրուն...


Այլ, ո՛հ, յորժամ հաճոյից հետ անբաժան
 Կ'ընկերակցէր արտասո՛ւքը վշտագին,
 Բաղդն երբ դատէր լոկ տխրութիւն ինձ արժան
 Ո՛հ, թաղուէի՛ ընդ մէջ կեանքի զզուանքին . . . :

Երբ նետէի զիս ծնողաց գրկաց մէջ
 Անդ ծծելու ուրախութեան զբաժակ,
 Երբ կեանքն իմս էր հրապոյրներով ալ անվերջ
 Ո՛հ, յղացայ նորա գգուանքն անապակ :

Այլ, ո՛հ, երբոր ծնողաց փոխան լոկ սեւ հող,
 Ի՛ երջանկութեան տեղ ալ սի՛րտ մը փլատակ,
 Լուսնակս յայնժամ մարե՛ց նախկին իւր փողփող,
 Եւ երբ յղացայ կեանքի զզուանքն անյատակ :

Յապագայում եթէ գտնեմ սէր մ'անհուն
 Յորում թաղեմ իմ հառաչն ու արտասուք
 Յայնժամ դարձեալ պիտի կրկնե՛մ խնդասուն,
 Թէ յղացայ կեանքի գգուանքն ես անսուգ :

Այլ, ո՛հ, երբոր ընկճեալ լինիմ բաղդին տակ,
 Շարունակեմ կրել սրտի տեղ սեւ խոց
 Օ՛ն, թէ յայնժամ նետուիմ այն վիհն անյատակ,
 Ուսկից եկայ, յանէութիւնն դժոխոց,
 Երբ պիտ' ծնանիմ զզուանքն կենաց ու հոգւոց :



ԱՌ ԼՈՒՍԻՆՆ ՔԻՇԵՐՈՅ

Հերի՛ք, լու՛սին, հե՛րիք փայլիս յեթերին,
Աչերէ՛դ ալ նետեր հերի՛ք թող թռին,
Անյա՛գ անդունդ, որ կը կլլես գաղտնիք սեւ
Եւ տակաւին փայլի՛ս յերկնից անդ վերեւ...

Հերի՛ք դիտես ժպտուն դիմօք մոլթ գիշեր,
Եւ մո՛լթ հոգիք, վառ կամ մարած սեւ յուզեր
Հերի՛ք ներկես սառած դէմքդ ի բոսոր,
Օ՛հ, ալ հերիք դիտես կարմիր սար ու ձոր...

Այն օրէն ցարդ, երբոր երկրէն տուիր խոյս
Նորա սիրտը պատառելով վշտայոյզ,
Լո՛ւսին, գաղտնի՛ք մ'եղար դու մեզ գաղտնեաց մէջ,
Գաղտնի՛ք, որոյ կայծեր պահես դեռ անչէջ...

Արդեօք քանի՛ սրտեր ի մի ձուլեցիր,
Քո՛ նդ վարսերով քանի՛ սէրք կան ցան և ցիր,
Դու դիտեցիր քանի աչեր փողփողուն,
Քանի՛ կուսանք ալ ՚ի մէջ սե՛ւ, թա՛ց հողուն...

Օ՛հ, քանինե՛ր սիրեցին և քանինե՛ր
Քեզ յղեցին անիծից սառ քամիներ,
Արդեօք քանեա՞ց, մեղմեցիր դու վիշտ, ցաւեր,
Քանեա՞ց հոգիքն ալ դարձուցիր փո՛ւլ յաւեր...


Ինչո՞ւ շրջիս եթերին մէջ կապուտակ,
 Սիրականի՞դ արդեօք փնտռես յիշատակ,
 Որդեկորոյս մայր մ'ես դու, ո՛ր լուսին,
 Թէ զուարթո՞ւն, ժպտո՞ղ մերկին, անյուսին...

Հերի՛ք, լո՛ւսին, հերի՛ք, թուի՛ր դու յերկին,
 Մռա՞յլը թող լինի դարման մեր վէրքին,
 Այ բաւ անքուն մեզ հսկեցիր դարերով,
 Մեզ ընծայես հերի՛ք, ալ քու գութ, գորով...

Գիտե՛մ, հիւլէ՛ մի ես դու մէջն անհունին
 Ոյր քով հիւլէք սարսուան, դողա՞ն, տժգունի՞ն՝
 Սակայն հոգիս մեղամաղձիկ ու տխո՞ւր
 Իւր մէջ անհո՞ւն մը զգայ, անհո՞ւն երկնաբոյր...

Գերեզմաննե՛րն կը սիրես դու, ո՞հ, ընդ միշտ,
 Բանաստեղծին մռայլած ճակատն ալ ՚ի վիշտ,
 Եւ ի՞նչ նա ալ, գերեզման մ'է կենդանի
 Ա՛հ, սափո՞ր մը յոյզերու սե՛ւ տապանի...
 Զանոնք դիտե՛ս, գգուե՛ս ու միշտ հմայես
 Արտասուքդ ալ բերէ ցօղովք իւր մայիս...

Գնա՛, լուսնա՛կ, ամպոց ետին դու մռայլ,
 Գնա՛, հեռո՞ւ մեր աչերէն արտասուող,
 Ամպե՛ր պատեն զքեզ, լուսի՞ն ոսկեփայլ,
 Մեզ ալ շիրմա՛ց պատէ այլ եւս խոնաւ հող...



ԱՐՅՈՒՆՔԻ ԿԱԹՈՒԼՆԵՐՆ

Առ ***

Դեռ նոր ժպտած արեւուն
 Մանկիկ մ'էի հրաշագեղ,
 Երբ աչացրս մէջ անհուն
 Կաթիլներու կայր հեղեղ,
 Ոյք անընդհատ կ'այրէին
 Քնքոյչ այտերն իմ մատաղ,
 Յորժամ կեանքը վշտագին
 Ինձ կը թուէր բաղդախաղ

* * *


Սակայն կեանքն ինձ թուեցաւ
 Երանութիւն մը լի սէր,
 Երբոր մերժա՛ծ վիշտ ու ցաւ
 Անցելոյս հետ վշտըմբեր,
 Ձեռքիդ վերայ երբ փափուկ
 Աչքս արտասուք կը հոսէր
 Սիրոյ վիշտն ալ խուսափուկ
 Նո՛ւրբ շրթներէդ կը թռչէր

* * *

Այն օրէն ցարդ սիրախանձ
 Ուր մարգարտունք գլորեցան
 Ու ընդ երկա՛ր ալ միմեանց
 Ընդխառնե՛ցան լո՛ւռ անձայն ,

Ո՛հ , սրտիս մէջ ամեն ժամ
 Զոյգ մ'արտասուք գլորին
 Յիշատակո՛ւմն կը մխամ . . .
 Յիշատակումն այն օրին , . . .

92 Սեպտ .



Լ Ո՛ Ի Ռ

Առ Տէր Եղիս Տէմիրհիպաւեան

Եւ հոն չեն հասնիր կոհակաց ահեղ որոտմունքը ,
 Ու հոն չե՛ն լսուիր մանուկ հրեշտակաց դողդոջ ճիչերը ,
 Ուր նախանձող տարերք ծածկած են տարերց իշխողը ,
 Փռչին Երկրին կը փակչի , Երկիրն ալ փռչիին :

Հոն ժամացոյցի սլաքը գործ չունի՛ այլ եւս ,
 Լռութիւնը ըսպէն է ու ըսպէն՝ լռութիւնը ,
 Անեղբութիւնը կը ճօճի ու կ'երերայ հոն ,
 Տիեզերաց ստեղծիչ՝ Աստուած կայ միայն :

Երկիրը՝ լռի՛կ կը թաւալի՛ իւր առանցքին վերայ ,
 Երկիրը՝ լո՛ւռ կը թաւալի՛ արեգին շուրջը ,
 Մարդն ալ լռի՛կ՝ կը գլորի փոսին մէջ ,
 Հոգին ալ անձայն՝ կը թաւալի՛ Աստուծոյ շուրջը :

Երազներ և յոյսեր կը քնանան քարերուն ներքեւ ,
 Շուշան-մարմիններ կը խամրին պա՛ղ քարերուն ներքեւ ,
 Մահը ծաղիկներ կը յանձնէ սեւ հողին ,
 Եւ նա ալ կ'առնէ և կ'ուտէ զանոնք :

Քահանան կը մրմռայ իւր շարականները,
 Փոսապեղն ալ պատենի մէջ կը դնէ հոգւոյն անգի'ր
 մատեանը,
 Գերեզմանը գերեզմանին մէջ, փոշին՝ փոշիին քով,
 Եւ կը սկսի անհո՛ւն լռութիւնը:

Եւ հողը իւր վերայ ծաղիկներ կը բուսցունէ,
 Սաբելու համար բնութիւնը՝ թէ իւր մէջ մարդ չըկայ,
 Մինչ նա կուլայ անմխիթար մօր մը պէս,
 Կամ մայրակորոյս գառնուկի մը պէս:

Եւ ծաղիկներ՝ լո՛ւռ կը փթթի'ն այտերու վերայ,
 Կարմիր կամ դալկահար այտերու վերայ կը փթթի'ն
 ծաղիկներ,

Մարդն ալ ծաղկեայ անկողի'ն մը կը կարծէ սե'ւ փոսը,
 Ուր անյուսութեան լո՛ւռ օձը գալարուած կը կենայ,
 Կ'երթայ պահ մը հանգչի'լ հոն,
 Եւ կը լռէ՛ յաւիտեան.....:

* * *

Իմ հոգիս ալ գանկիս մէջ կը սարսուայ լռիկ ու անձայն,
 Ճակատըս կափարի'չ իմ դագաղ-գանկիս,
 Եւ կըսպասէ շարունակ, որ մեծ քունը գայ,
 Հողը հողուն տանի, զինք ալ Աստուծոյ:

Եւ, օ՛հ, ի՞նչ է արդեօք Աստուած,
 Թերեւս անհուն գերեզման մը,
 Ուր կը գլորին հիւլէ հոգիներ.....
 Ո՛չ, ո՛չ, տիեզերքի մեծ ելլն է յաւիտենականը...:

Երազներ և յոյսեր կը քնանան իմ ճակատին ետեւ,
 Միայն սարսուռ մը կը լուսաւորէ զանոնք,

Բաժանման սարսուռն է այն հոգւոյն սեւ հողէն,
Որ պիտի երթայ, անցնի՛ յաւիտեան :

Եւ ժպիտներ լո՛ւռ կը փթթին ճակատիս վերայ,
Մռայլ կամ պայծառ ճակատիս վերայ կը փթթի՛ն
ժպիտներ,
Սուրբ յիշատակներ ալ ծաղկեայ անկողի՛ն կը կարծեն
իմ ճակատը՝
Ոյր ետին անյուսուժեան լո՛ւռ օձը գալարուած կը
կենայ,

Եւ տաք շրթներ կ'երթան հոն
Ապրիլ, այրի՛լ մի վայրկեան,
Եւ կը սարսուռն, կը լռեն,
Ու կը միսա՛ն յաւիտեան :

Եւ հոն չեն հասնիր յուսոյ տժգոյն նշոյլները,
Սիրոյ մանուկին ճիչերն ալ չեն լսուիր հոն,
Ուր Աստուծոյ ճառագայթը շաղուա՛ծ է հողուն հետ,
Հողուն մէջը պլլուած Երկնից անհուն հորիզոն :

Հուռ հողուն մէջ պլլուած,
Հուռ տեղ մ'երթան հոգիներ,
Մթնոլորտ մը միգամած,
Ո՛հ, հոն կ'երթան հոգիներ,

Իմ հոգին ալ լուռ, անձայն,
Երազոց հետ գոյնզգոյն,
Հո՛ւռ կ'երթայ հոն՝ ուր կ'երթան
Հուռ ու անխօս րոպէներ
Յաւիտեա՛ն :



Դ Ա Ր Ձ Ե Ա Լ Ն Ր Ա Ն

Եկո՛ւր, սէ՛րդ իմ, թող միանա՛ն
 Պահ մի, հոգիք մեր և արտսուք
 Թող մեզ չազդէ՛ վշտաց ովկիան
 Սիրտք մեր սիրոյ ունին պասուք . . . :

* * *


Ո՛հ, շե՞ս գիտեր, թէ կայ մի օր,
 Յորում խամրի՛ն պիտ' գեղդ ու փայլ,
 Եւ երբ գողտրիկ այտերդ բոսոր,
 Պիտ' զգենո՛ւն դալո՛ւկ, այլայլ . . . :

Ո՛հ, շե՞ս գիտեր, թէ կա՛յ մի օր
 Երբ ընդ խառնի՛ն պիտ' մեր աճիւնք,
 Եւ, ո՛հ, կեանքը մեր սիրօրօր
 Հեռո՛ւ լինի պիտ' շա՛տ հեռուն :

Ո՛հ, շե՞ս գիտեր, թէ Վիրմին ծոց,
 Սարսո՛ւռ մը զգաս պիտի անհուն,
 Իմ սիրտը հէգ ու վշտախոց
 Քու սրտիդ քո՛վ թաղո՛ւած պահուն . . . :

* * *

Եկո՛ւր ուստի թող միանա՛ն,
 Պահ մի հոգիք մեր և արտսուք
 Թող մեզ չազդէ՛ վշտաց ովկիան
 Սիրտք մեր սիրո՛յ ունին պասուք . . . :



Ծ Ն Ո Ի Ն Դ Ս

Գիշերոյ մը մուժն ու մռայլն անհուն
 Պատած էր զերկիր 'ի սեւ մի պատան,
 Երբ վերն երկնից մէջ լայսեր դողդոջուն
 Յառէին նորա, յանհունն 'ի տապան...


Փետրուարն էր այն, եղանակ սառի,
 Տրտին մի հիւսի'ս փչէր մուլեգին,
 Չեան ճերմակն ու մռայլն գիշերին
 Զիրեա՛ր լափէին, 'ի ճի'ւղ ցաւագին...

Կէս գիշերն անցած միայն տան մը մէ՛ջ
 Մոմ մի նուաղէ՛ր լուսով մը աղօտ,
 Նմա՛ն լուսնակի՛ն պայծառ ու անշէջ
 Գողցես Աստուծոյ յղէր խունկ, աղօթ...

Քիչ յետոյ յանկարծ պատրոյզն մարեցաւ
 Երբ մի մուժ պատեց սենեակն բնաւին,
 Եւ այդ մուժին մէջ մանկիկը ծնա՛ւ,
 Մանկի՛կ մը ցաւոց, մանո՛ւկ մռայլին...

Այսօր այդ մանուկ եղաւ պատանի
 Դարձեա՛լ կը սիրէ զմուժն ու գիշեր,
 Սիրէ՛ փաթթուի՛լ մահու պատանին
 Իւր մէջ կրելով անցեալ սեւ յուշեր...

Եւ, ա՛հ, մուժին մէջ ծնած այդ մանուկ,
 Մո՛ւր անցելոյն տէ՛ր եղող այն տղայ,
 Եւ նա՛, որ չառա՛ւ ժպիտ մ'խուսափուկ
 Ե՛ս էի



ԼԱՄԱՐԹԻՆԱՅ ՔՆԱՐԸ

Մուսանե՛րը տուին նմա զիւր քնար ,
 Որ երգէ՛ր նա երկինքը ջինջ ու յստակ ,
 Սեւ վշտերը կապեցին իւր քնարին լար ,
 Եւ երգ , հառա՛չ թրթռացի՛ն սիրատաք . . . :

* * *

Այսօ՛ր չկա՛ն ո՛չ Լամարթին , ո՛չ քնար
 Արձագանգնե՛րն այլ կան նոցա ամեն կողմ ,
 Հոն , ուր սրտե՛ր կ՛ապրին եւեթ վշտահար ,
 Եւ ուր երգե՛ն յաւիտեան սի՛ւք , վտակ , հողմ . . . :

* * *

Մահն ու դարեր , ո՛հ չե՛ն ազդեր հանձարին ,
 Ոյր բնութիւնն է ուսումը ու մատեան ,
 Ժամանակաց հոսանքը մի՛շտ կը մարին ,
 Այլ նա մնա՛յ և նա կ՛ապրի յաւիտեան :

92 Սեպտ .

ԴՊՐՈՅԱԿԱՆ ՊԱՆԴԻՍԻՆ ՄԱՀԸ

Պատուհանին առջեւ նստա՛ծ լուռ ու մուկ
 Երբ վերջալոյսն կարմիր ամպոց
 Ետին թաղէր իւր հուրն ու բոց ,
 Առ որ բնութիւնն կը հիանար անշուշ :

Եւ հոն նստած քնարին հետ սիրաձայն ,
 Պանդուխտն երգէր ցոյց տալ նիհար
 Եւ տժգոյն սիրտ մը վշտահար
 Սիրտ , որոյ մէջ պարե՛ն արդէն ցաւք համայն . . .

Եւ այդ թրթռուն , մեղադաշնակ մահերգին
 Կ'արձագանգեն լեռ ձոր ու սար
 Ու ձայնակցէր սիրտս ալ հրավառ
 Եւ դողդոջէ՛ր մարմինս նիհա՛ր վշտագին . . . :

Երգէ՛ քնա՛ր , իւր սրտին հետ միասին
 Մինչեւ քաշուի՛ն մատունք ճարտար ,
 Մինչեւ կտրի՛ իւր սրտին լար
 Եւ յաւիտեան երթ այք լռել ՚ի փոսին . . . :

Բ .

Պատուհանին եզրը նստած լուռ ու մունջ
 Մինչդեռ զերկիր պատէր խաւար
 Եւ երբ սրտեր լոկ սիրահար
 Յղեն միմեանց զոյգ հառաչնե՛ր սիրափունջ :

Պանդուխտն աչերն յառա՛ծ , գամա՛ծ երկինքին
 Շարժէ՛ր մատներն մտամուր
 Աչերէն ալ ոլոր մուր
 Կաթկըթէին հատիկները արցունքին . . . :

Եւ , ո՛հ , խառնած ողբ ու քնար միասին ,
 Անէ՛ծք մը տայր սեւ աշխարհին ,
 Մատունքը մինչ փաթթած լարին
 Կը հեծկլտա՛ր կեանքը ու մահն անյուսին . . .

Ահ, գերագոյն այդ վայրկենին, ա՛յդ պահուն,
 Երբոր կեանքի ալիք ծփա՛ն
 Ու սե՛ւ խոհեր ալ միաբան
 Շրջապատե՛ն նորա միտ՛քը երազուն

Քնարն յայնժամ շեշտե՛ր ունի մոգական,
 Որ նուազկոտ և ա՛հ, վերջի՛ն...
 Կենաց վերջի՛ն, սե՛ւ հառաչին
 Թարգմաններն են, երբ պիտ՛ լռեն յաւիտեան:

Արդեօք ինչե՞ր յիշեր պանդուխտ պատանին,
 Երբոր կեանքը խոյս տար յիւրմէն,
 Եւ, ո՛հ, տխուր շիրմին եզրէն
 Իւր երազներն յանձնէ՛ր թրթռուն քնարին...

Արդեօք սիրոյ յիշատա՞կ մը կ'այրէր զայն,
 Արտասուքով լի, ջերմաջեր
 Մեղամաղձոտ երբ իւր աչեր
 Կը յառէին հորիզոնի՛ն տա՛ր ու լայն...

Արդեօք հոնտեղ իւր մայրիկի՞ն կայր պատկեր
 Թէ կը միտա՛ր սեւ գերեզման,
 Հէգ անյուսին միա՛կ դարմա՛նն,
 Եւ ապագայ փայլուն կենաց լուսաբեր...

Ո՛հ, չե՛մ գիտեր... միայն քնարն հեծկըլտար,
 Եւ այդ վսե՛մ, վսե՛մ պահուն
 Երբոր հիւլէն փոխուէր յանհո՛ւնն...

Ասպարիզին թեւակոխել ի կատար:

Ահ, իմ աչեր շլացում մը ստացան
 Երբ պատռեցաւ երկնից կամար

Եւ հոն պանդուխտն յիւր ի քնար
Դեռ եւս կ'երգէր հեշտասարսուռ . . . տխրածայն :

Գ .

Վայրիկ մ'յետոյ . . . դարձեալ նոյն մուտն ու գիշեր
Նոյն աստղիկներ կը շողային
Փայլով մը նուրբ ու երկնային
Հուսնակն ալ վարս մ'ամպերէ ներս կը քշէր :

Պատուհանին եզրը սակայն լուռ ու մուկ
Կը մնային զոյգ մը քնար
Մինը տժգո՛յն , միւսն անբարբառ
Հո'ն լռէին ու նիրհէի'ն անտրտունջ . . . :

Եւ ա՛հ , պանդուխտն , աչերն անկայծ ու տկար
Ուղղե՛ր անթարթ , ուղղե՛ր ի վեր ,
Երբ ե՛ս ալ իմ կարմրած աչեր
Բեւեռեցի՛ իրեն վերա՛յ ընդ երկար :

Գ .

Միւս օրը դագաղին մէջ անկենդան
Պլլած ՚ի մէջ սեւ պատանին
Երկնցուցին հէգ պատանին ,
Ընկերներն ալ տուին զնա սեւ հողուն :

Յայսօր նորա քնարն ու սիրտ հո'ղ դարձան ,
Սակայն աչերս ընդ միշտ յառի'ն
Պատուհանին այն սեւ եզրին ,
Ուր տեսա՛յ մերթ զնա սառա՛ծ զերդ արձան . . .

Վ Հ Ա Տ Ի Ն Ս Ի Ր Տ Ը

Վհատին սիրտն ի՞նչ է արդեօք, եթէ ոչ
Ալեակներով մի ծփծփուէն ովկէան,
Որոյ մէջ երբ շանթ մ'որոտայ մեղմագոչ
Յուզէ՛ հոգին, յուզէ՛ զնա յաւիտեան...

Վհատին սիրտն ի՞նչ է արդեօք, եթէ ոչ
Գերեզման մը, ո՛հ, անհո՛ւն մը վշտագին,
Անիծալի՛ց այն սե՛ւ գուլթը ու խոռոջ
Որ, ա՛հ, կեանքի և սրտե՛րու է բագին...

Վհատին սիրտն ի՞նչ է արդեօք վշտահեծ
Որ պաղատի ընդ միշտ առ բաղդն անողոք,
Երբ իւր մէջը վիշտ ու ցաւեր փոքր ու մեծ
Գոգցես կեանքի կազմե՛ն անէծն ու բողոք...

Վհատին սիրտն ի՞նչ է արդեօք ազազո՛ւն,
Որ երբ ցրտին հողմը փչէ սե՛ւ աշնան,
Ո՛հ, կը փոխուի տերե՛ւի մը դալկասուն,
Ու կը գրկէ՛ իւր սիրելի՛ գերեզմանն...

Վհատին սիրտն ի՞նչ է արդեօք ... ո՛հ ցաւոց
Թերթիկներով կազմակերպեալ մի մատեան,
Որմէ ընդ միշտ ծուխե՛ր կ'ելլեն սրտախոց,
Ծուխե՛ր ընդ միշտ, վերն Անմահին սուրբ յատեան...

Վհատին սիրտն ասուով մի է զայրագին,
Որ զարնուի նետի մը պէս Աստուծոյն...
.....Վայրիկ մի լո՛յս, զերդ մի շողը արեգին,
Եւ յաւիտեան սե՛ւ անէծք մը, սե՛ւ ... տժգոյն:


Մ Ա Տ Ա Ն Ի Ն

Օղա՛կ մի է, ոսկեայ օղա՛կ մը միայն,
 Որով սրտեր յիրար կապուին սիրագին,
 Մահու այն մեծ օղակին յար ու նման,
 Որ ապագան կը կապէ այս ցուրտ կեանքին . . . :

Օղա՛կ մի է, որոյ մէջէն մերթ կարեն
 Սիրոյ փոխան մտնել, ո՛հ, հեռ ու նախանձ,
 Որք անձնասպան լինիլ խնդրեն տկարէն
 Ո՛հ, պահանջ մը վայրենի՛ ու մոլեխանձ . . . :

Սիրոյ շե՛շտն է նա, խտացեալ, խուսափուկ,
 Երկինք մարդուն ձօն ըրած է մատանին,
 Լո՛կ նշա՛նը այն զգացման սե՛ւ, փափուկ,
 Որ մերթ լինի փափո՛ւկ շղթա՛ն սատանին . . . :

92 Սեպտեմբեր .



Մ Ե Ռ Ե Լ Ի Ն Ե Ր Փ Ը

Առ Սիպիլ

Կեանքի վիշտերն ու ցաւեր
 Ի լուր երգոց կամոքի՛ն,
 Եւ սրտեր ալ խո՛ց աւեր,
 Ակնարկով մը կաթ ոգին :

Ձի ակնա՛րկն իսկ է մի լո՛ւռ
 Երգ, կամ գեղօն ու գեղգեղ,
 Աչերն, դաշնա՛կ սիրահուր,
 Հոգին՝ պարո՛ղ սրտազեղ . . . :

* * *

Հուրի՛ մ'ես դու կամ հրեչտակ,
 Որ շե՛շտ մ'ունիս անմեղին,
 Երկնից կայծե՛րն յիշատակ,
 Որ ո՛չ երբէք նուաղին . . .

Որ կը խառնէր քու երգեր
 Հետը ալեաց աղմուկին,
 Երբ փրփուրներն ալեհեր
 Կը հմայե՛ն մեր հոգին . . .

* * *

Պատանի մ'եմ դեռահաս
 Եւ իմ շրթները նիհար,
 Յուզմամբ մը խակ ու տըհաս
 Սիրեն երգե՛լ վշտահար . . .

Ի՛ ըմպե՛լ կենսաց դա՛ռն լեղին,
 Անյուսութեան հետ անոյշ,
 Փարի՛լ քարին ու հողին,
 Երանութեա՛մբ սիրանոյշ . . . :

* * *

Ալեկին քով դու յատա՛կ,
 Ժայռերու մէ՛ջ ես ահեղ,

Դու ե՛րգ մը ես սիրատաք ,
Եւ արցունք մը վշտահեղ :

Կենդանութեանց մէջ ես դու ,
Շիրմաց մէ՛ջ է իմ հոգին ,
Դու կը յառիս վարդերու ,
Եւ հողերո՛ւ ցրտագին . . .

Դու հառաչն ես երկինքին ,
Ես ալ մուխը դժոխոց ,
Դու՝ օրհնե՛նքը սիրագին ,
Ես անէծքը սրտախոց . . . :

* * *

Այլ խենդութի՛ւն է քո քնարն բաղդատել
Աններդաշնա՛կ ողբերուս հետ ,
Ոյք անի՛ծ ել միայն գիտեն ու ատել ,
Եւ շոգւոց պէս լինիլ անհե՛տ . . .

Ձի քու երգեր պիտի մընա՛ն , ցորչափ կան
Եթ եր , ժպիտ , երկինք , գարուն ,
Քնա՛ր , դաշնա՛կ կամ երերուն
Եւ կամ ամպե՛ր , երկնից՝ խոկմունքն իրական . . .

Մինչ իմ երգեր , հոն , ուր նիրհէ գերեզման ,
Մահու երկրին մէջ այն անհուն
Պիտի սահի՛ն լռի՛կ , խոհուն ,
Եւ հոն անձայն փոշեաց հե՛տը միանան . . . :

Ձի կեանքիս մէջ իմ տաւղին
Շիրի՛մն եղաւ սիրելին ,

Իմ շրթներս ալ անմեղին
Երգը ըսեն մեռելին :


* * *

Մինչ քու երգեր հմայուն
Այն մեծ կեանքը սիրեցին ,
Ապրին ուստի պիտ' անհո'ւն
Դարերու մէջ , յաշխարհի'ն . . . :

Եւ զերդ մեղու , մարդիկ պիտի տարմովին .
Միշտ գան հայի'լ ծաղիկ-երգոցդ ու հըպիլ ,
Ալիքները մինչ գո'ւ ծովուն կամ հովին ,
Պիտ' գան հծծել շիրմիդ վերայ , ո' Սիպիլ . . . :

Անմահու թի'ւնն հոգւոյդ և քո համբաւին ,
Մինչ դու շրջիս յերկինս լուսինն ու արեւ ,
Եւ մինչ նետուած լինիս 'ի մէջ Ամբաւին
Քեզ պիտ' յիշեն ծաղիկ արցունք ու տերեւ . . . :

92 Դեկտ .



Ճ Շ Մ Ա Ր Տ Ո Ի Թ Ի Ի Ն Ն

Կարապի մը երեւոյթը ունէր նա ,
Երբոր մարդուն հետը եկաւ յայս աշխարհ ,
Որ երգ մ' ունէր , որ կը կրկնէր մշտակայ ,
Պա'յծառ շեշտով և գանգերով անհամար :


Կոմիտիւկիոս , Պուլտոս , Սոկրատ , Պղատոն ,
 Եւ մարդարէք եղան նրան արձագանգ ,
 Մինչ նա մարդոց ցոյց տար մի նոր հորիզոն ,
 Եւ անսպառ ու անվախճան սիրո՞յ կեանք :

Օր մ'ալ մարդիկ , այդ կարապը խաչեցին ,
 Եւ նա երգեց վերջին անգամ մելանոյշ ,
 Եւ մարդկութեան երակաց մէջ հեշտագին
 Սարսո՛ւռ մ'եղաւ երազներու հետ քնքոյշ . . .

* * *

Այսօր կարապն Երկնից մէջ է , այլ իւր ձայն ,
 Դարուց մէջէն սահի հեզիկ ու խաղաղ ,
 Ճշմարտութի՛ւնն՝ ժամանակա՛ց քահանան ,
 Դեռ կը հնչէ՛ իւր նուագը մե՛ղմ , նուա՛ղ . . . :

92 Դեկտ ,



Ն Կ Ա Ր Ե Ի Ի Ղ Ձ

Ծալքերուն մէջ մթութեան ,
 Հոն , ուր սարսուա՛ն ասուպներ ,
 Եւ ուր լուսնակ ոսկեհեր
 Կը թաւալի՛ յաւիտեան :

Երկիրն հագած էր պատան ,
 Ծաղկունք լռիկ ննջէին ,
 Եւ երազներ սիրային ,
 Հո՛ն մնային ՚ի տապան :

Գեղեցկութեամբ երկնային,
 Ո՛հ, ժտեա՛լ էր այն գիշեր,
 Հիացմամբ մը ոյր աչեր՝
 Ասուպներ վար նայէին,

Ո՛հ, ալուց մէջ այն մըռայլ
 Կո՛յս մը թռչէր զերդ հրեշտակ,
 Անդուենդին մէջ անյատակ,
 Սոխակին չափ անայլայլ...

Եւ չոր թղթի մը վերան
 Այդ կոյսն այնչափ համայուն
 Թուէր ինձ, որ իմ հոգոյն
 Զիղերը դեռ կ'երերան.....

* * *

Օ՛հ, թէ մռայլն լինէի,
 Իմ մէ՛ջ լինէր նէ համակ,
 Որ ըմպէի զերդ բաժակ,
 Սո՛ւրբ նեկտարով, սիրով լի.....:

Օ՛հ, թէ օդը լինէի,
 Որ նէ շնչէ՛ր զիս սիրով,
 Որ զիս տանէր սրտին քով
 Իւր ջինջ, յատակ, անալի.....:

Օ՛հ թէ ամպը լինէի,
 Որ փարէի իւր կուրծին,
 Եւ հոն ՚ի սէր երկնածին
 Ճարպի մը պէս հալէի:

Օ՛հ, թէ լուսի՛նն լինէի
 Որ զիս գրկէ՛ր նայուածքով,
 Ուր կը ծփայ սիրոյ ծով
 Գեղեցկութեա՛մք վայրենի . . . :

Ո՛հ, թէ որդ մը լինէի
 Եւ կրճէի՛ իւր այտեր
 Եւ իւր գողտրիկ սիրտն անտէր
 Ինձ կուր լինէր մեղրալի . . . :

* * *

Օ՛հ, թէ իւր ձեռաց շուշանին մի թերթ
 Լինէի, որ զիս հոտոտէր սիրով,
 Որ, ո՛հ, ապրէի եւ ալ մերթ ընդ մերթ
 Իւր շրթանցը մօտ, հո՛ն սիրագորով . . . :

Ո՛հ, հո՛ն լինէի, թող հո՛ն մի վայրկեան,
 Լսէի գամ մը իւր սրտին տըրով
 Եւ ալ ինձ համար դարուց յաւիտեան
 Թող չըլլար՝ կեանքը սիրո՛յ մտամփոփ :

Եւ հո՛ն ապրէի, թող հոն մի վայրկեան
 Իւր սրտին հետ կի՛ց իմ սիրտ բաբախէր,
 Եւ այն սուրբ սիրոյ լափէ՛ի մատեան,
 Որոյ մէջ չը կա՛ն դեռ վիշտ ու ախեր . . . :

Եւ հո՛ն մեռնէի, թող հոն յաւիտեան,
 Ուր գողտրիկ լոյսեր շարժի՛ն, կ'երերան . .
 Ուր ներա աչեր, աղբերք գթութեան,
 Տօղեր պիտ' տեղան իմ շիրմին վերան :

* * *

Սակայն հուրիներ միշտ մենէ հեռո՛ւն
 Թռչին ու կերթան քրքիչո՛վ մ'անգութ
 կեդրո՛նը արփից, երկնից լոյսերուն,
 Զի նոքա հո՛ւր են, իսկ մենք հիւլէ՛ք փո՛ւտ . . . :


Նոքա չե՛ն գար, ո՛հ, ապրիլ մեր սրտին
 Հո՛ղ ծալուցը մէջ, ուր վխտան որդեր,
 Զինջ եթե՛ր մ'ուենին մինչդեռ յերկինքին,
 Ուր շողա՛ն լոյսեր ու փթթին վարդեր . . . :

Եւ ի զուր նրանց այտերուն կարմիրն
 Զանան նկարիչք թղթին վրայ հոսել,
 'ի զո՛ւր մարդիկ ալ զանոնք սիրալիր
 Սրտն մէ՛ջ պահել . . . յուզի՛լ, երազել . . . :

Ասուպի պէ՛ս են, որ մերթ փոզփոզին,
 Շրջմովի՛կ հուրե՛ր միայն եւ միայն,
 Որ կուգան պահ մը կ'երեւնան հողին
 Եւ ալ չեն լինիր միշտ ու յաւիտեան . . . :


* * *

Այլ թերեւս մի օր ցուրտ մահէն անդին
 Հանդիպինք նրանց անմահից 'ի պար
 Եւ սեղմենք զանոնք վերայ մեր կուրծքին,
 Մինչ մարմինն ալ հո՛ղն գրկէ վշտահար :



Երբոր անշուշ նկարին
 Որ երա՛զ մ'է խարուսիկ,
 Հոգւոյն ձեռներն երկարին,
 Ա՛յդ ալ երա՛զ կը լինի
 Երա՛զ մ'անոյշ, գեղեցիկ,
 Որ ընդ ծնանիլն կը մեռնի . . . :

92 Դեկտ.



ՊՍԱԿ ՄԻ ԱՐՏԱՍՈՒԱՇԱՂ, Ի ՇԻՐԻՄ ՎԵՐԱՊԱՏ.

Մ. Գ. ՇՄԱԻՈՆԵԱՆԻ

Ո՛հ, այս տարի սեւեր հազան մեր հոգիք
 Յիշատակաց պատան եղան մեր սրտեր
 Ա՛հ, հայրի՛կն իսկ զմեզ թողուց անոքիկ,
 Ո՛րք մնացինք, որբերու պէս հէգ, անտէր . . .
 Ուստի թող սեւ, ա՛լ սե՛ւ հազնին մեր հոգիք . . . :

Մահն այս տարի սրտեր ծխեց չէ թէ խուռնկ,
 Մեր սիրելի՛քն եղան ճարակ բուրվառին,
 Լեղի՛ արցունք սքողեցին մեր այտուռնք
 Արեգակունք ասո՛ւպ եղան կամարին...
 Մահն ալ թող միշտ սրտե՛ր ծխէ, չէ թէ խուռնկ...

Ինչո՞ւ, հայրի՛կ, դո՛ւ ալ տուիր հրաժեշտ
 Երբոր մենէ գտնուէիր հեռո՛ւ, տար,
 Օ՛հ, ատեցի՛ր կեանքըդ սիրով այնքան հեշտ,
 Որ բաժանամամբ այնքան եղաւ վշտահար...
 Ինչո՞ւ, հա՛յրիկ, ինչո՞ւ տուիր հրաժեշտ...

Սո՛ր խոցեցիր դու մեր սրտեր, ո՛հ շա՛տ խոր
 Մեզ թողելով յիշատակաց քո, մի բոյլ,
 Երսուն տարեաց, ո՛հ, պերճախօս այն ժխոր
 Ճակատիդ շուրջ նարօտ մ'հիւսեն վարդաձոյլ,
 Սո՛ր խոցեցիր դու մեր սրտեր, ո՛հ, շա՛տ խոր...

« Ո՛վ մարդ, հոգեր վշտե՞ր ունիս », երգեցի՛ր
 « Միշտ չեն մնար, չը վրդովիս
 Չար սատանէն չըլլա՛յ » թովիս,
 Երկի՛նք մը կայ քեզի բաժի՛նն այն անձիւր...

Եւ, ո՛հ, դու միշտ ապրեցա՛ր աստ անվրդով,
 Մինչեւ տժգոյն սե՛ւը մահուն
 Բաժնե՛ց զքեզ տարաւ անհուն
 Աստուա՛ծն երգել ու մնալ միշտ նորա քո՛վ...

Մենք ալ, հայրիկ, քեզ պէս կուզենք այնտեղ գալ,
 Երթա՛լ տժգոյն այս արեւէն
 Հեռի՛ մահուան ցուրտ բա՛րեւէն
 Հո՞ն հիանա՛լ, լռե՛լ, պշնուլ ու խոկալ...

Մահէն անդին դու մեզ ըսիր, թ' ինչե՛ր կան,
 Աստուած, երկի՛նք փրկիչ մը սէ՛ր,
 Կեա՛նք մ'անվախճան, քաղցրի՛կ յոյսեր,
 Յոյսե՛ր . . . որոնք գիտենք թէ են իրակա՛ն . . .

Եւ, ո՛հ, դու այժմ գացա՛ծ ես այն սուրբ աշխարհ,
 Թողելով աստ լոկ մի շիրիմ,
 Ուր կը մնան մեզ մտերիմ,
 Այն մեծ մարդուն մնացո՛ւրդը ու նշխա՛ր . . .

Եւ թողուցիր մեզ յիշատակ մ'անմուաց,
 Ոյր վերայ մեր սրտից խորէն,
 Պիտի ընդ միշտ արցո՛ւնք ծորեն
 Մինչեւ մենք ալ քեզ պէս հասնինք այն փառաց :

92 Օգոստոս



Ա Ռ Մ Ե Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Ո՛հ, տիրացա՛յ, հոգւո՛յս ընկեր, դարձեալ քեզ,
 Անգամ մի եւս տեսայ զքեզ սիրագին,
 Եւ չրթուենքներս անգամ մ'ալ քո չրթուենքին
 Հաղորդեցին գանկիս բոցերն սրտակէզ :

Ա՛հ, մենութիւն, երբ գիշերոյ քօղին տակ
 Հոգիս բոսոր, սրտիկս ալ սեւ են հագած,
 երբ այտերս ալ կը կծկին մերթ տխրազգած
 Աչերս ալ մինչ արցո՛ւնք հոսեն դառն համակ,
 երբ էութիւնս անէ՞ծ ցայտէ վշտահեծ,
 Իողա՛յ մարմինս, ոյր մէջ սարսուռն առնու քայլ
 Եւ մինչ մարի՛ն աչերուս հո՛ւրն, բոցն ու փայլ,
 Սուպոտ ձա՛յն մ'երբ թռչի՛ բերնէս զերդ հեծեծ,
 Յայնժամ միայն զքե՛զ գտնեմ ապաստան,
 Հո՛ն թաղելու իմ գոյութիւն վշտապատ,
 Ի քե՛զ գտնեմ յայնժամ անհուն մ'անապատ
 Ուր կրնամ լա՛լ միշտ ու մեռնի՛լ յաւիտեան:

* * *

Ա՛հ, մենութիւն, երբսր վշտերս ՚ի ժխոր,
 Գան անդ վառել զիս, բռնկել իմ հոգին,
 Որ կը թռչի՛ իւր վանդակէն ցաւագին
 Նորա տուփը տանիս ՚ի հո՛ղ թաղես խոր,
 Եւ ա՛հ, հոնտեղ հսկե՛ս զնա յաւիտեան,
 Աի մը մոխիր, չոր ոսկորներ ու կըմախ,
 Որոց վերայ չ'իյնար աչաց շի՛թ մ'աւա՛ղ,
 Հո՛ն ուր գրուած կայ ցաւերո՞ւ սե՛ւ մատեան:

* * *

Օր մ'ալ երբոր երկիրն պաղած դառնայ սա՛ռ,
 Արեգին ալ զերես ծածկէ՛ մի մութ քօղ,
 երբ այս աշխարհն սե՛ւ մնայ միշտ, սե՛ւ, անշող,
 Մինչ այլ լոյսեր կը պլպլան անհամար,
 Յայնժամ դու ալ պիտի ելլե՛ս իմ շիրմէս:
 Անհուն ՚ի խինդ տիրե՛լ պարապ աշխարհին,

Որոյ երես պատեն սառն ու ցուրտ քամին ,
 Ուր չը փթթին այլ եւս շուշանք շպտերես ,
 Երբոր քո մեծ , վեհ կերպարան ու տեսիլ
 Ինձ ոչ սոսկում պիտի առթեն , ոչ պատկառ
 Զի իմ աչերն ու սրտիկն ալ վշտահար
 Քու քո՛վ ուսան տրտմի՛լ , լա՛լ ու չը կասի՛լ ,
 Այն ատենն ալ պիտի գոչեմ սրտագին

Թէ տխրեցա՛յ , հոգւոյս ընկեր , դարձեալ քեզ ,
 Անգամ մի եւս տեսայ զքեզ սիրագին
 Եւ շրթունքներս անգամ մ՛ալ քո շրթունքին
 Հաղորդեցին գանկիս բոցե՛րն սրտակէզ :

91 ՓԵՏՐՈՒԼԱՐ

ՆԵՐԱ ԾՆՆԴԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ

(ՓԵՏՐ . . . 18 . .)

Առ***

Սուլեն , գոռան սիւքն ու քամին ,
 Երկինք ժխոր մ՛ունի անհուն ,
 Գոգցես , ձիւներ պարել կամին ,
 Վերեւ ծաղկանց խամրած , տժգոյն ,
 Մինչ կը գոռա՛ն սիւքն ու քամին :

Մեռած ձմրան սառ արտասուք ,
 Կը կաթկըթի'ն այտերէն վար ,
 Արեւք լացած բռներ են սուգ ,
 Ի տես ամպոց փոթորկավար ,
 Ոյց մէջ լողա'ն սառ արտասուք :

Բնութեան ճերմակ այն դագաղին
 վերայ երկինք արցունք ցողեն ,
 Հոգեաց կայծերն ալ նուաղին ,
 Կեանք չը ծըծեր հողը հողէն ,
 Ընդ մէջ ճերմակ այն դագաղին :

Սակայն հեռո՛ւ այդ հովերէն ,
 Զիւներու տակ հեզիկ , հեզիկ ,
 Ննջէ՛ ծաղիկ , մինչ կ'աւերե'ն
 երկիրն համայն ամպն ու հովիկ ,
 — Ծաղիկն հեռո՛ւ այդ հովերէն :

* * *

Այդ սգաւոր երկինքին տակ
 Օր մը ծաղի'կ մը փթթեցաւ
 Ո՛չ, նէ կայծի'կ մ'էր հըրատաք ,
 Որ վերերէն եկաւ , անցա՛ւ
 Այդ սգաւոր երկինքին տակ

Արփւոյն շողը՝ հողը գրկեց ,
 Դրախտէն հուրի հրեշտա'կ մ'ինկաւ ,
 Առ որ երկինք համայն հեծեց
 « Բիւր զմայլմանց յիշատակաւ »
 Արփւոյն շողը հո՛ղը գրկեց :

Փետրուարի սրտիկէն սառ
 Կա՛յծ մ'էր, հրդեհ մ'էր այն անհուն,
 Արեգ մ'անբաւ շողի հրավառ,
 Եկաւ ընդ մէջ տիղմին, հողուն,
 Փետրուարի սրտիկէն սառ . . . :

Չմերան մէջ ծնաւ Մայիս,
 Չիւներուն մէջ ծիւ մը ծաղիկ,
 — Կոյսը՝ որոյ վրայ հըմայիս,
 Յերկնի'ց եկաւ կաթ մը ցօղիկ
 Երբ ճմրան մէջ ծնա՛ւ Մայիս :

Ամպոց ետին լոյսը լացաւ,
 Կաթիլ մը հո՛ւր թռաւ աչքէն
 Ինկաւ հողուն մէջ հալեցաւ,
 Կաղմեց հուրի աղջիկ մ'անդէն,
 Երբոր վերը արեգ լացաւ :

* * *

Այսօր սրտիս քառսին մէջ
 Նոյն հուր-կաթիլն եկաւ, ինկաւ,
 Արե՛գ մ'եղաւ հո՛ւրը անշէջ,
 Ու անդէն սառն ու ճիւնն հալեցա՛ւ
 Մռայլ սրտիս քառսին մէջ :

Այդ հուր կաթիլն դո՛ւ ես, ո՛ր կոյս,
 Սիրտս հալեց քու սէ՛ր միայն,
 Չքեզ պահեմ խորքը հոգւոյս
 Ի մահ, ՚ի սպառ, ՚ի յաւիտեան,
 Այդ հուր կաթիլն դո՛ւ ես, ո՛ր կոյս :

* * *

Այլ, ո՛հ, չըլլա՛յ թռչիս սրտէս,
 Հողը հողին չըլլա՛յ աւար,
 Չըլլա՛յ սառի՛ հողիս հրակէզ
 Ու հոն տիրէ մահու խաւար,
 Արե՛գ, չըլլա՛յ թռչիս սրտէս :

Զի կը փակե՛մ աչերս յայնժամ
 Արեգակին, լուսնին լուսոյն
 Շիրմիս մէջն ալ սեւ յարաժամ
 Կ'անիծե՛մ քեզ և քո զանուն
 Եւ կը փակեմ աչերս յայնժամ :

93 ՓԵՏՐՈՒԱՐ



Յ Ի Շ Ա Տ Ա Կ

Առ Տր. Ա. Զօպանեան


Անցեալը սեւ շիրմին մէջը հալեցաւ,
 Ոչինչ մնաց կեանքէս համակ մելանոյշ,
 Մանկութիւնս արծուի մը պէ՛ս սլացաւ,
 Եւ նորա հետ ծնողներն ալ իմ անուշ :

Վարպէսիդ պէս սիրեմ խոկա՛լ միայնակ,
 Քեզ ալ նըման յուզուիլ լռի՛ն ու լռի՛ն
 Սիրտըս համակ յիշատա՛կ մ'է աւերակ,
 Ողբա՛լ ուսան թելերն ալ իմ քնարին

Սիրեմ մեռնի՛լ, տեսնել երա՛զն այն անհուն,
Որով կ'արբի՛ն, կ'արբին անմահ հոգիներ,
Անեզրութեան մէջ սըլանալ մոլորուն:

Այն կեանքին մէջ գրկել զքեզ, Չօպանեան,
Ամբաւին մէ՛ջ թռչիլ յաւէրժ անվեհեր,
• Չէ թէ լոկ յուշ, այլ իրակա՛նն յաւիտեան:

93 Ապրիլ



ԸՆԴԷ՞Ր ԱՊՐԻՄ — ԸՆԴԷ՞Ր ՄԵՌՆԻՄ

Մինչ տեսանեմ զի յայս աշխարհ
Լի են արցունք ցաւ ու աշխար,
Եւ վաղանցիկ, ո՛հ, այս մեր կեան
Է վշտերու անհուն ովկեան,

Ընդէ՞ր ապրիմ,

Այլ մինչ տեսնեմ, զի այդ ցաւեր
Զիս չեն թողուր ընդ միշտ աւեր,
Եւ թէ վշտերս մեղմել կարե՛մ
Մտերմի մ'երբ ձեռք երկարեմ,

Ընդէ՞ր մեռնիմ,

Մինչ գտանիմ ՚ի փորձ, ՚ի փաստ,
Թէ չուառաց կայան մ'է աստ,
Եւ թէ երբէք չը գտա՛ւ մարդ
Իւր ցաւերուն յագուրդ մը ցարդ,

Ընդէ՞ր ապրիմ,

Այլ մինչ տեսնեմ զի դէպ Քանան
 Այս սուրբ տեղերն ճամբայ բանան
 Ուր կարէ մարդ զերծ յողբոց դառն
 Երջանկութիւն վայելել անխառն ,

Ընդէ՞ր մեռնիմ .

Մինչ կ'որոնեմ աստ 'ի յերկրի
 Վարդեր , որով սիրտն իմ բերկրի
 Այլ գտանեմ լոկ սուր փուշեր
 Ամպ և ձմեռ , սեւ մութ գիշեր ,

Ընդէ՞ր ապրիմ . . .

Այլ մինչ քննեմ բնութեան զօրէն ,
 Որ ձայն տայ ինձ սարէն ձորէն
 Թէ նախ փուշեր և ապա վարդ
 Նախ խաչ , ապա պըսակ գեղաղարդ ,


Ընդէ՞ր մեռնիմ

Մինչ տեսանեմ մահու ճիւղաղ
 Ժպտի վերեւ հոգւոյս նուաղ
 Եւ մրմունջներն յուսոցս անթիւ
 Լռեցունէ մի գոռ շանթիւ ,

Ընդէ՞ր ապրիմ

Այլ մինչ զգամ զի էն անտես
 Հրաւէր կարդայ ինձ իւր 'ի տես
 Եթէ միակ ճամբայ կայ
 Է՞ր սոսկում տայ ինձ նորա ահն ,

Ալ թող մեռնիմ :



Ի Մ Ս Ի Ր Ա Յ Ը

Սոխակներ վարդ կը սիրեն ,
 Պատանիներն ալ կոյսեր ,
 Բանաստեղծք ալ օղեղէն
 Սին երազներ ու յոյսեր :

Մին կը սիրէ ովկէանին
 Փրփուրներն ու ալիքներ ,
 Հողմոց ի լուր որք կ'ուռին
 Ճերմակ ճերմակ ալեհե՛ր . . .

Մին կը սիրէ լուսնակին
 Ճակատը կոյս ու տժգոյն ,
 Ոյր շուրջը միշտ կուտակին
 Խօլ ամպիկներ՝ զգոյնզգոյն :

Մին կը սիրէ զգեփիւռ ,
 Որ կը սուլէ ու կ'երթայ ,
 Ծաղկանց մէջէն սիրասփիւռ
 Կամ լերանց մէջ ափափայ :

Ոմանք սիրեն վայրենի
 Անտառները ու լեռներ ,
 Ուր եղնիկ'ը կ'արիւնի
 Գնտակէ մը կարեւէր . . .

Ոմանք սիրեն մրայօն
 Կոյս մը տժգոյն ու նուաղ ,
 Ոյր ճակատն է հորիզոն
 Սիրոյ անամպ ու խաղաղ :

Ոմանք երկի'նքն իսկ կուտան
Ակնարկի մը փոխարէն ,
Որ կը թռչի ի մթան
Սիրուհւոյ մը աչերէն :

Յերկրի գիրեար կը սիրեն
Կենդանութիւնքը համայն ,
Սէ'րն է տէրը սէ'րն օրէն
Տիեզերքին յաւիտեան . . . :

* * *

Ինձ հարցուցին թէ դու ի՞նչ
Սիրես , տժգոյն պատանի . . .
Սիրտիդ մէջը արդեօք ջինջ
Սիրոյ կայծը գըտանի՞ . . . :

Այլ երբ ըսի թէ այն տեղ
Կըմախնե՛ր կան յիշատակ ,
Եւ թէ սէրն ալ , ցուրտ կանթեղ
Ալ մարա՛ծ էր բազդին տակ . . . :

Ո՛հ խնդացի՛ն իմ վրան ,
« Սուտ կը խօսիս , սուտ » ըսին . . .
Եւ ամեն ոք միաբան
Զիս յոռետե՛ս կոչեցին . . . :

* * *

Այն օրէն ցարդ կզգամ ես ,
Թէ կը սիրեմ երկու բան ,
Մին յիշատակն սրտակէզ ,
Միւսն ալ ցուրտ գերեզման . . . :

— Հոն ուր վարդեր թօթափին
 Ճակտին տեղ մնան չոկ մազեր ,
 Կայծեր մոխրի՛ կը փոխուին
 Մեռած սրտի մի՛ յեզեր . . .

Ո՛հ , հո՛ն է , հո՛ն յիշատակ
 Իրականին հետքն միայն
 Փայլն ասուպին երկնից տակ ,
 Որ երա՛զ մ'է յաւիտեան . . . :

— Սիրեմ նաեւ գերեզմանն
 Վերջին կա՛յքը իմ մարմնոյն ,
 Հո՛ն , ուր լռեն աղմուկ , ձայն ,
 Հիացման տակ գերագոյն . . . :

Ո՛հ , շատ սրտեր հո՛ն են , հո՛ն
 Շատ վարդեր ալ հոն գացին . . .
 Ոմանք բացուած , այլք կոկոն
 Գեղեցկու՛թեա՛ մբ երկնածին :

Ո՛հ , հոն կ'երթայ ամեն ոք
 Հոն կը ցամքին արտասուք ,
 Հոն տե՛ղ դադրին վիշտ ու հոգ ,
 Ո՛հ , հո՛ն լռեն ցաւ ու սուգ . . . :

Հոն կը հատնին կանթեղները ու գարուն ,
 Հո՛ղ կը դառնան ծաղկունք , վարդեր ու տերեւ ,
 Հոն կը լռեն դաշնակ , քրնար երերուն ,
 Ու հոն մարի հանճարին ալ վառ արեւ . . . :

Թէեւ մահը տիրէ հոն
 Այլ սիրեցի ես շիրիմ ,

Վերջալուսոյ մրայօն
Կոյսն, եմ միակ մտերիմ . . . :


* * *

Սակայն թերեւս գա'յ մի օր,
Երբ իմ սրտին ձմերան
Յաջորդէ մի անցաւոր
Երեւո՛յթը խօ՛ւ գարնան . . . :

Երբոր ծըլին ծաղկունք, վարդեր սիրագին,
Երբ գայ իմ քով դարձեալ յուսոցս հրեշտակ
Երբոր լեցուած հրապոյրներո՛վն երկինքին
Վանե՛մ սրտէս անցեալ աւուրցս յիշատակ . . . :

Յայնժամ դառնամ թերեւս նորէն կամարին,
Նրան յառիմ ստուերի պէս խօլական,
Հոն վշտերս ասուպի պէս կը մարին,
Այլ ուր մընան ու փայլփրլա՛յ Իւր վէկան . . . :

92 Նոյ .



ՍԻՐՈՅ ԳԵՐ ԵԶՄԱՆ՝ ՍԻՐՏԸ

Ծառոց տակէն, ստուերաց մէջ ահաւոր
Պատանի մը ման կու գար հոն ժամերով,
Միշտ գլխիկոր, ոտքն ՚ի յերեր, ամէն օր
Աչերն անոյշ, այլ միշտ լեցո՛ւն արցունքով . . . :

Հոն արուեստին չէին հասած նուրբ ձեռներ ,
Ամենայն ինչ վայրի էր հոն և հսկայ ,
Թռչնակք այնտեղ կ'երգէին մերթ կարեվէր ,
Վտակն ալ միշտ լռիկ սահէ'ր ակամայ . . . :

Եւ հոն լռիկ սահէր նաեւ պատանին ,
Որոյ համար կեանքը անէծք կը թուէր ,
Մարդկութիւնն՝ զո՛հ մահու յաղթող տիտանին ,
Երջանկութիւնն ալ հաճո՛յք մը սե՛ւ , աւե՛ր . . . :

Եւ այդ մռայլն , աղջամղջին , մո՛ւթ վայրեր ,
Մեռելներու վստահութեամբը համակ ,
Հէգ պատանւոյն գանկին նման ՚ի յերեր ,
Կը հծծէին , կը հեծէին մեղանուագ :

Ուռո՛յց մը կար թեթեւ , երկրին կուրծին վրայ ,
Զոր պատքին բաղեղ ու մարգ միասին ,
Ծաղիկներ ալ , որք հովիկէն կ'երերան ,
Կը ծածկէին ոսկորները այն կուսին . . . :

Հոն էին , ո՛հ գեղ ու հասակ և յոյսեր ,
Հոն կը ննջէր մեռած սրտի՛ մ'սիրելին ,
Հոն դադրէին սրտի տոփիւնք ու յոյզեր ,
Հոն էր կոյսը պատանքովը մեռելին . . . :

Եւ պատանին հոն յաճախէր ամէն օր ,
Կուրծքին վերայ սեղմէր այն սուրբ գերեզման ,
Որոյ ներքեւ մահը պառկեր ահաւոր ,
Եւ ո՛հ , մեռած սի՛րտ մը տրոփէր ոյր վերան . . . :

Ա Լ Մ Ի Լ Ա Ր

Արտասուքը կը յարմարի թշուառին
 Նորա քնա՛րն ողբայ միայն անընդհատ
 Սրտին հե՛տը, հոգւոյն հե՛տը վշտահար,
 Ուր դժոխոց միայն կայծեր կը վառին,
 Յոյսը մարի այն էակին մէջ վհատ,
 Խու՛նկը հատնի կեանքին մէջէն այն բուրվառ . . . :

Արտասուելը կը յարմարի լոկ կանանց,
 Որոց սրտեր այնքան շատ են զգայուն,
 Որ միշտ արի՛ւն արցունք հոսեն բոցավառ,
 Եւ սիրոյ մէջ անխաբուսիկ ու անանց
 Իրենց աչերն այն կապոյտ, սեւ, հըմայուն,
 Արտասուքներ կը գլորին վառ ու մար . . . :

Ուստի հերի՛ք իմ քնարը ողբագին
 Սարսուա՛յ մենիկ ու հեծեծէ՛ անընդհատ,
 Սիրտս ալ հերի՛ք ցաւոց լինի թող բագին
 Երջանկու՛թեան երեւոյթ է՛ն յուսահատ . . . :
 Եւ ձայն մը գայ սրտիս խորէն վշտահար,
 Հէգ պատանի ալ մի՛ ողբար, ալ մի՛ լար :



Հ Ն Չ Ե Ա Կ

« ՎՍՏԱՀ ԵՒ ՅԱԻԻՏԵԱ՛Ն » . . .

Որպէս վստահ ամբան կապո՛յս երկնքին
 Նաւաւարր ծովո՛ւն յանձնէ զիւր նաւակ ,
 Ես ալ վստա՛ն հու աչերուն ժմսագին
 Քեզ կը յանձնեմ իմ պարզ սրտիկը միակ . . . :


ԹԱՐԳ . ՅԱՆՔԼԻԱՐԵՆԷ

Եւ այն թղթին վերայ դէմքը կար կուսին ,
 Տո՛ւքը գարնան սիրոյ և պերճ գթութեան ,
 Հոգին շաղուած մարմնոյն հետ միասին
 Կը մրմնջէր գոգցես , «Վստա՛հ , յաւիտեա՛ն» :

Եւ իւր պայծառ ճակտին ետեւ կը ցոլար
 Սիրոյ արտին , կանթեղին պէս ՚ի տատան ,
 Եւ աչերն ալ ժպտո՛ւն , յերկնից հըրավառ ,
 Մրմնջէին գոգցես , «Վստա՛հ յաւիտեա՛ն» :

Թէև անշունչ էր նէ լռի՛կ ու անձայն ,
 Սակայն կարծես համակ հուր էր , համակ երգ ,
 Որ խըլըրտէ՛ր թուղթին վերայ մի վայրկեան :

Սիրտը գոռա՛ր , գոգցես , զերդ շանթ , կամ ովկեան ,
 Հոն ծըփային երջանկութեան խօ՛յ տարերք ,
 Ի՛նք մրմնջէր , կարծես , «Վստա՛հ , յաւիտեան» :



Ն Ե Ր Ա Հ Ա Մ Ա Ր

Առ վ. վ.

Կեանքն ինձ համար եղաւ մի թոյն,
 Զոր ըմպեցի ես ցմրուր,
 Ի զուր յոյսեր ալ գոյնզգոյն
 Որոնեցի աստ կամ այլուր

Եւ աշխարհէն ալ յուսահատ . . .
 Սիրեցի մահն ու իր որդին
 Անյուսութիւնն, ոյր վշտակաթ
 Շատ ծըծեցի շիրմաց ջուրին . . .

Եւ ուզեցի, որ անձնասպան
 Լինիմ, ըմպեմ մահու բաժակ,
 Սիրեմ հոգւոյս չափ գերեզման,
 Ո՛հ, անոգիկ, անյիշատակ

Եւ չ'թողած հո՛ս մի բողբոջ
 Ինձ պէս անշուշտ մա՛րդ մը աւեր,
 Իմ շրթներով սիրադողդոջ
 Համբուրեցի մահու ցաւեր

Սակայն անդին մահուան փոսէն
 Կեանք մը տեսայ երբոր անհուն,
 Ուր սարիներ ալ չ'ակօսեն
 Ճակատն իրենց անցած պահուն :

Այլ սոսկացի տղու մը պէս,
 Ուզեցի կեալ կեանքին ի ծոց

Ուր արտասուք, ցաւ սրտակէզ
Միշտ կը լռեն 'ի լուր երգոց

Տեսայ յայնժամ շիրմին եզրէն
Ամպասքօղիկ մի հըրեշտակ,
Ոյր գանգուրներ թեթևօրէն
Կը շարժէին նրբագիտակ . . .

Մեղոյշ աչեր իւր երկնային
Սէր հոսէին յորդահեղեղ,
Ծիածան մ'ալ յիւր ճակատին
Երանութեան պարզէ աղեղ

Եւ իւր ձեռներ սիրամուր
Այն ինչ տեսայ ինձի պարզած,
Սարսուռ մ'իջաւ խուրո մուր
Ոսկորներու մէջ սիրարժարծ . . .


Եւ, ո՛հ, սլացքով մը խօլական
Դէպ յայն հրեշտակ սիրանուէր,
Դողդոջ ձեռներս երկարեցան
Մահուան այն ցուրտ փոսին յեզեր :

Եւ այն րոպէն երանութեան
Շրթներս փակա՛ծ ճակտին տժգոյն
Ալ զգացի զիս յաւիտեան
Եթերաց մէջ երջանկագոյն

Զի իմ սիրտը մահուն ի գոգ
Սառ մը դարձած, ո՛հ, պաղարձան,
Ալ հոն չըկա՛յ անցեալին խոկ
Վիշտը միայ միայն անձայն

Ներա տալու չունիմ աշխարհ ,
 Իմ չեն լոյսերն ալ անհամար
 Սիրտ մ'իսկ չունիմ ալ սիրահար . . .
 Կեանք մ'ունիմ լոկ ներա համար :

92 Նոյ .



Մ Ի Կ Ա Ր Ծ Ե Ր

Ալեկաց վրայ ոստոստուն ,
 Փրփուրներով վաղանցիկ ,
 Տղա'յ լինիս կամ թէ ծեր ,
 Քեզի համար հաստատուն
 Տուն մը շինել գեղեցիկ
 Մի՛ կարծեր :

Գրագէտ կամ բանաստեղծ
 Թէ նախահայր մ'ունենաս ,
 Որոյ կապրի՛ն դեռ գործեր ,
 Տարիներու տակ անեղծ ,
 Զքեզ հանճար վաղահաս
 Մի՛ կարծեր :

Եթէ ամպեր սեւագոյն
 Պատեն երկինք ու արեւ
 Մարին նրանց հուր , կայծեր
 Երեւոյթով մը տժգոյն
 Զքեզ ալ միշտ անարեւ
 Մի՛ կարծեր :

Ծովու մը երես երբ խաղաղ ,
 Կայնի՛ս , դիտե՛ս լռակաց ,
 Ուր չըկան իսկ նուրբ գըծեր
 Զեփիւռիկով մը նուաղ ,
 Զայն ազատ ի փոթորկաց

Մի՛ կարծեր :

Երբոր մարդ մը ալեհեր ,
 Վտակին պէս հեզասահ
 Անցնի՛ , տժգոյն , տըկար , ծեր
 Զքեզ ընդ միշտ անվեհեր
 Պարման մընալ ու անմահ

Մի՛ կարծեր :

Ամէն պատուած հագուստով ,
 Կոյր մարդ մ'ըլլայ կամ թէ կին ,
 Կը թափթըփին ոյց ձորձեր
 Որք ձեռք բանան քեզ փութով ,
 Միշտ մուրացի՛կ , վշտագին

Մի՛ կարծեր :

Ամէն մէկ սիրտ սիրագին ,
 Որ փայլ մ'ունի նուաղկոտ ,
 Որ իւր դուռը չը՛ գոցեր
 Ընդդէմ հոգւոյդ մարմաջին
 Ընդ միշտ տկար ու վախկոտ

Մի՛ կարծեր :


Վարդը անփուշ ու գողտրիկ ,
 Կեանքը ժպտուն ու անցաւ
 Սիրտը անյոյս ու անսէր ,

Կոյսերն ալ միշտ գեղեցիկ,
 Կամ խարեբայ, սիրադաւ
 Մի՛ կարծեր . . . :

Եւ վերջապէս քեզ համար
 Սիրտ մը գտնել մտերիմ,
 Որ միշտ բուժէ՛ քու խոցեր,
 Սպեղանեօ՛ք սիրավառ,
 — Ատե՛լ տայ մահն ու շիրիմ . . .
 Մի՛ կարծեր . . . :

Ձի երկինք չէ այս աշխարհ,
 Ուր միշտ բաց է գերեզման,
 Ուր սէրը կայ ՚ի յերեր,
 Ուր նախա՛նճը կայ անմար . . .
 Ո՛հ . . . սրտերը սէր համայն,
 Մի՛ կարծեր . . . :

92 Իեկս .



Պ Ե Ր Ե Չ Մ Ա Ն Ը

Այս է աշխարհն՝ ուր կը մարին,
 Լոյս ու արեւ յոյսեր ու սէր,
 Ուր որ կապոյտը կամարին
 Սեւի փոխուի շիրմին յեզեր . . .

Երկիր մը, որ ծերք ծնանին,
 Ուր թօթափեն վարդից թերթեր,

Եւ ուր զերդ դարք յովկէանին
Կաթիլ կաթիլ սահին մարդեր . . . :

Հոս հաւաքուին տարիք ու գեղ
Տղայ և ծեր, մանուկ ու կոյս
Հոս կը դիմեն դարուց հեղեղ
Երազ, ցնորք, պատրանք և յոյս :

Հոնտեղ մարդը փարի հողին
Եւ կը լռէ հոն յաւիտեան .
Ու յոյսեր ալ հոն նուազին
Քահին ներքեւ անյուսուծեան . . . :

Եւ մարդը հոն մնայ ընդ միշտ
Անգործ, մենիկ ու անտրտունջ
Հոն կը պառկի անցաւ անվիշտ
Ուր չը հասնի՝ ալեաց մրմունջ .

Հոն մռայլ կայ փոխան արփւոյն ,
Եւ անձայն հող մարդուն փոխան
Եւ սրտեր ալ սիրաստժգոյն
Մոխիրներու տակ կը մխան . . . :

Վանքին պէս լո՛ւռ է գերեզման
Քաղտնիքն հողուն մէջ կը թաղուին .
Ի զո՛ւր դարուց դիտունք համայն
Հարցեր կ'ուղղեն հողո՛ւն՝ կաւին :

Ամեն մարդ հոն դիմէ ընդ միշտ , շարունակ ,
Ուր պատասխանն կայ կեանքի մեծ հարցումին
Ուր կը լինի սէրը հին հի՛ն յիշատակ
Եւ մարդն ալ հո՛ն միշտ հո՛ն դիմէ տակաւին :

Կ Ո Յ Ս Ի Ն Հ Ո Ք Ի Ն


Ո՞ւր է արդեօք մանկան հոգին . . .
 — Երկնից ի մէջ անմահից հետ ,
 Հոն կը ննջէ դեռ սիրագին ,
 Կամ էին մէջ լինի անհետ . . . :

Ո՞ւր է արդեօք վարդին հոգին ,
 — Հողմիկին մէջ անուշաբոյր ,
 Կարմիր ամպոց մէ՛ջ երկինքին
 Կամ շրթանց մէջ սիրահամբոյր . . . :

Ո՞ւր է արդեօք կուսին հոգին
 — Ամպոց ետեւ զերդ մի արեւ ,
 Կամ աստեղաց մէջ կաթոգին . . . :

Սիրոյ անհուն երկնից վերեւ ,
 Կամ պատանւոյն լանջքին ներքեւ
 — Ոհ , հո՛ն է , հո՛ն կուսին հոգին

92 'Իեկս .



« Մ Ի Մ Ո Ռ Ն Ա Ր Զ Ի Ս »

Ա. Ռ. Ի. Գ.

Երբոր անցնիմ ովկէանը մեծափառ
 Հակոտնեայ մը լինիմ քեզի վշտագին ,

Կորուսանեմ երբ մեր երկինքն հըրավառ,
 Լսէ՛ թէ միշտ կը կրկնէ՛ քեզ իմ հոգին,

« Մի՛ մոռնար զիս » . . . :

Երբոր աշունն մա՛հ ներշնչէ տերեւին
 Երբ հովն երգէ անցնիլն ծաղկանց ու գարնան,
 Երբ կամարին վրայ ալ ամպե՛ր երեւին
 Զիս զգալով նրանց մէջ յաւիտեան

« Մի՛ մոռնար զիս » . . . :

Երբոր գարուն ժպիտ սփռէ ամեն կողմ,
 Երբ գտնուիս յեզեր այն սուրբ լճակին,
 Ոյր ճակատը միշտ կ'ակօսե՛ն սիւք ու հողմ,
 Հոն տեսնելով պատկերն սրտիս վիճակին

« Մի՛ մոռնար զիս » . . . :

Իրիկունը երբոր հայիս աստղերուն,
 Ուր կը ժպտի կասպոյտին տակ խօ՛ւ վեկան,
 Թէև սիրուն, սակայն մենէ միշտ հեռուն,
 Հո՞ն գրուած է, ուր կայ սէրը իրական .


« Մի՛ մոռնար զիս » . . . :

Երբոր պանդուխտ պատանի մը սիրաթով .
 Իւր յուզմունքը յա՛նձնէ տաւղին թեւերուն,
 Նրան մէջը իմ մրմունջը ալ կայ թոթով,
 Որ կեանք առած, քեզ շնչէ՛ երերուն,

« Մի՛ մոռնար զիս » . . . :

Եւ երբ շիրմի մ'առաջ կայնած, միայնակ,
 Կո՛յս մը տեսնես, որ հառաչէ՛ վշտագին .

Գիտցիր, թ'օր մը ես' ալ կըլլա'մ յիշատակ,
 Ես ալ զո'հ մը բաղդին թուքի'ն, ապտակին,
 Ո'հ, հոն յիշէ' քու հետ ըրած ուխտերնիս
 Լա'ց ու ժպտէ, այլ բնաւ « մի' մոռնար զիս » . . . :



Ձ Մ Ր Ա Ն Օ Ր Մ Ը

Երբ կը ճշէ ձմրան քամին,
 Հիւսէ երկրին ձիւնէ գանգուր,
 Յայնժամ այտերն իւր թառամին
 Ծաղկունք կըլլան ձիւներու կուր,
 Երբ կը ճշէ ձմրան քամին . . . :

Պատուհանի մը մէջ սակայն
 Ծլին ծաղկունք հեռու ցուրտէն,
 Ի'երբ ձերմա'կ է երկիրն համայն,
 Կարմիր, դեղին վարդեր՝ բարդեն
 Պատուհանի մը մէջ սակայն,
 — Երբ կը ճշէ՝ ձմրան քամին . . . :

Երբ կը ճշեն նախանձ ու ոխ
 Կ'անցնին սիրոյ գարունն ու երգ
 Ու կը մեռնին՝ զեփիւռն ու ցող
 Սեւ հաճոյից համակ տարերգ,
 Երբ կը ճշեն՝ նախանձ ու ոխ . . . :

Սրտի մը մէջ տաքուկ սակայն
 Ծլին՝ ծաղկունք սիրաբողբոջ ,
 Եւ երբ մարին ասուպք համայն
 Սիրոյ արփին վառի՛ դողդոջ ,
 Սրտի մը մէջ տաքուկ սակայն
 — Երբ կը ճշեն նախանձ ու ոխ :

Ի Ի Ր Փ Ե Ր Ե Չ Ա Ն Ը

Ի Յիշատակ Ի . Է .

Շատ մը պլպլուն ասուպներ
 Եթերին մէջ մարեցան ,
 Սակայն իրենց շողին տեղ
 Ոչ ոք տուաւ մահարձան :

Այլ միջոցին մէջ անհուն
 Թափառեցա՛ն աւերակ ,
 Ոչ ոք գըթաց խեղճերուն ,
 Ըսաւ պահե՛մ շիրմին տակ . . . :

* * *

Գարնան տերեւք թափեցան ,
 Աշնան ՚ի գոգ , հո՛ն լռիկ ,
 Եւ ո՛հ , աստ անդ ցիր ու ցան
 Հողմո՛ց եղա՛ն խաղալիկ . . . :

Իրենց դալարն կորուսի՛ն ,
 Դալկին եղան կուր , ճարակ ,
 Եւ բաղդակից անյուսին ,
 Ձը հանգչեցան շիրմին տակ . . . :

* * *

Շատ մը վարդեր գեղանի
 Ձոհ եղան շատ կուրծերու ,
 Շուրջը չսիրոյ սեղանի
 Օրիորդի կամ ծերու :

Սակայն ո՛չ ոք ՚ի նրանց
 Թողուց այս տեղ յիշատակ ;
 Այլ այն ծաղկունք սիրախանձ ,
 Ձը հանգչեցա՛ն շիրմին տակ :

* * *

Շատ սոխակներ երգեցին
 Ի տեւ վարդին սիրաբոյր
 Ողբով մեռան ու գացին ,
 Հեռո՛ւ երկրէն անհրապոյր :

Սակայն իրենց սուրբ երգեր
 Մնացին անյիշատակ
 Ի իրենց սիրտը կարեվէր
 Ձը հանգչեցաւ շիրմին տակ :

* * *

Կոյսն ալ մեռաւ . — Գարնան յանձնեց իւր գարուն ,
 Աչաց կապոյտն ալ ալեակին , Եթերին ,

Վարդին տուաւ բոսորը իւր այտերուն ,
 Իւր մրմունջն ալ բնութեան շարժուն կիթա'ւին :

Լուսնին տուաւ իւր մազերը ոսկեգոյն ,
 Եւ Մայիսին յանձնեց աչացն իւր վտակ ,
 Հոգի մ'ունէր . . . հետը տարաւ Աստուծոյն ,
 Սիրտն ալ թողուց սրտի՛ւ . սիրո՛յ յիշատակ . . . :

Եւ քանի կան գարո'ւն , ալեակն ու եթեր ,
 Քանի թրթռան դաշնակ , քնար սիրագին . . .
 Քանի վարդեր բուրմունք ու թոյր ունին դեռ
 Եւ ո՛հ քանի լուսնակ ճեմէ յերկինքին ,

Քանի Մայիսք , սիրոյ արցունք կ' ցօղեն ,
 Քանի մնայ Աստուածութիւն մ'իրական ,
 Քանի տրուիէ իմ սրտիկն ալ հողեղէն ,
 Պիտի ապրի այն կամ կուսիկն ալ յաւիտեան :

Զի բնութիւն է , ո՛հ , նրան մահարձան ,
 Իմ սիրտն հիւլէ Աստուածութիւն մ'ալ ահեղ ,
 Ո՛հ կ'ապրի՛ նա և պիտո՛ ապրի յաւիտեան ,
 Պիտի ապրի՛ սրտի մը մէ՛ջ սիրագեղ . . . :

92 Նոյ .

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐՁԱԿ ԳՐՈՒԱԾՔ

Մ Ե Լ Ա Ն Ի Ա Մ Ն

Երազե՛լ կ'ուզեմ, թէև մեռնիմ ալ, սակայն մի՛շտ
երազել

Եւ, ո՛հ, տակաւին ու տակաւին կեանք կոչուած
չիրմաբուրային երազն չը լրացուցած իմ դէմ կը գըտ-
նեմ լոյսերու, մեր ճանչցածներէն շատ տարբեր լոյ-
սերու ծնունդն եղող այն մեղամաղձիկ և վեհ ուր-
ուականը, որ իւր հոգի-գրիչն անջրպետելով մարմին
կոչուած հիւլէից շարայարիւր կազմածոյէն — միշտ նի-
հար, միշտ վշտագին — վայրիկ մը կը գերէ՛, կը շըղ-
թայէ՛ մեր հոգիներն ալ իւր հետ անեզրութեան մէջ
թաղուելու, անհո՛ւնը զգալու, անբաւութիւնը իմա-
նալու համար Օ՛հ, հեշտապատի՛ր երազ . . . :

Տիեզերքի մահընդերաց մէջէն ազու և հոգեսար-
սուռ շեշտերով այն ինչ կը նուիրէ իւր նուիրական քը-
նար, կը նուիրէ՛ կըսեմ իւր յաւիտենական Նիւվանա-
յին . . . և ես ալ իւր շեշտերէն անբաժան ու անմեկին,
սարսուալով կ'ունկնդրեմ այդ մշտնջենի անէութեան
գուժերգին, զոր այնքան սիրե՛ց նա գեղգեղել . . . :
Եւ այդ խո՛ւլ ու վշտերգակ ներդաշնակութեան ի

լուր կը սառի՛ն իմ նիւթային շամանդաղներ և հոգիս
այժմէն իսկ գրկե՛լ կըղծայ ապագան, մահավերջի վի-
ճակը ուր կը հաւտամ, թէ կը պլպլա՛յ անմահութիւնը:

Սուր և թեւասլացիկ երեւակայութեամբ մի կը
տենչամ մխրճիլ ե՛ս ալ, անմահդ Մեւանիա, այն սեւ
ու ամայի մահին ցո՛ւրտ, շատ ցուրտ դագաղին մէջ,
ե՛ս ալ կղծամ ու կը բաղձամ դիտել այն թանձր ու
խորին մթութեան մէջէն. դիտել, յուզի՛լ. հմայի՛լ ու
պշնուլ ՚ի տես Անմահին եւ անմահութեան, և հոն ե՛ս
ալ, երգել կեանքը, երգել հոգին, երգել սէրը և
զԱստուած . . . :

Սակայն զՁեզ տեսնելէն առաջ, առա՛ջ տեսնելէն
Ձեր մեղամաղձոտ դիմագիծները, զորս արդէն երազած
եմ այնչափ անգամ, և առա՛ջ այն օրէն, երբ իմ
ջախջախ քնարն ալ պիտի երթայ միանալ իմ յոյսերու
և երեւակայութեանց հետ սեւ հողուն մէջ, ո՛հ, կը-
սեմ այն օրէն առաջ կը սիրեմ ցուրտ համբոյր մ՛ալ
ե՛ս յաւելուլ քո գրչին և ճակտին, Ազնի՛ւդ Մեւանիա,
որ գիտցար այնքան լաւ ընկղմիլ, արտասուել և լը-
ռել, լալ ու միանգամայն երգել Եւ ինձ ալ
թող մնայ մեռնիլ մենիկ ու անփառունակ . . . :

92 Յուլիս

Ս Ի Ր Ո Յ Ծ Ա Ղ Ի Կ - Ա Ր Փ Ի Ն

Ա.

Լերան մը կողին վերայ սպիտակ շուշան մը կ'աճէր :
Ինք չէ՛ր գիտեր, թէ ուսկի՞ց եկած էր իւր սերմը,

ինչպէ՞ս թաղուած էր հոն, կամ ի՞նչ նպատակաւ :
Միայն կըզգար, թէ կ'աճէր : Գարնան օրերն էին
տակաւին : Ամէն օր անձրեւ մը կը թրջէր նորա տե-
րեւները և անո՛յշ զովութիւն մը կուտար անոր : Իրմէ
քիչ մը հեռուն արծաթի վտակ մը կը սահէր ճերմակ
խիճերու մէջէն, առանց երբէք մօտենալու շուշանին :
Սակայն երկուքն ալ զուարթ էին :

* * *

Ամառ եկաւ : Երկինքը ալ չէ՛ր անձրևեր, Արեգակը
միայն կ'այրէր : Ի՞նչ փոյթ շուշանին իրմէ քայլ մը հե-
ռուն վճիտ վտակի մը գտնուիլը : Նա օգուտ մը չէ՛ր
ըներ իրեն համար :

Ծռե՛ց իւր ծաղիկը, կախե՛ց իւր շորցած ծղօտը,
և ծարուսի՝ մարեցաւ նա, փտտեցաւ, փոշիացա՛ւ . . . :

Բ .

Դեռ նո՛ր արեգակին ծոցէն կը փախչէր հրահոսան
Նեպտոնը, ցուրտ եթերին մէկ փոքր անկեան մէջ
թաւալելո՛ւ համար իւր մօր բոլորտիքը : Տաք սիրտ մը
ունէր տակաւին, և իւր կրծոց վերայ կեանքի հրա-
շալի տիեզե՛րք մը կը սնուցանէր : Եւ այդ հեռաւոր
մոլորակը թերեւս ծաղրանօ՛ք կը դիտէր արեգակին
մշտնջենական կծկուիլը և հեռանալը յիւրմէ, զի ման-
կան մը տա՛ք արիւնը կըզգար իւր երակացը մէջ
Երազներու հո՛ւրը :

* * *

Դարեր անցան : Յաւիտենական ցրտութեան մէջ սառած էր Նեպտոնը : Ի՞նչ փոյթ իրմէ հեռուն մայր արեգակին վառի՛լը կենսատու ջերմութեամբ : Ո՛հ, ի՞նչ փոյթ հոն ելած հրային փոթորիկներն ու հրահալ մետաղաց անվերջ անձրեւներն, որք այնքան կենաց կայծե՛ր կը պարգեւէին մօտակայ մոլորակաց : Հեռո՛ւ էր նա կեանքի կեդրոնէն :

Եւ փոքր առ փոքր պաղեցաւ ու սառեցաւ նա : Մեռաւ, գեղածիծաղ բնութիւն մ'ալ թաղուեցաւ : Եթերը իւր շիրիմն եղաւ :

Պ.

Մարդ կոչուած պզտիկ, կաւեայ բնակարանին մէջ, Երկինք ծաղիկ-սիրտ մը տնկեցին : Դեռածի՛լ էր նա տակաւին, անմեղութեան արեւն ալ շող ու բոյր կ'ընծայէր նմա : Ապագան Սիրոյ արփին ալ երազոց եթերին մէջ լոկ գոյութիւնն ունէր : Կեանք մը բուրաւէտ, ժամե՛ր երջանիկ, — Ահա մանկութիւնը :

* * *

Տարինե՛ր անցան : Սահած էր անմեղութիւնը կեանքի հորիզոնէն, թշուառութեան և պայքարի ցուրտ քամիներ դալկահարած էին այն ծաղիկը, որոյ թերթերուն մէջ կը պլպլար յաւիտենական արտասուքը :

Ո՞ւր էր այդ պահուն սիրոյ արփին :

Հեռուն կը փայլէ՛ր նշուլագեղ, այլ գրեթէ անջերմին ու անկենդան : Եւ այն ծաղիկը խամրեցաւ անկայծ ու անարեւ :

Ուրիշ սիրտ մը նորա գերեզման եղաւ,
 Եւ վերն ալ Սէրը սառեցաւ և նա՛ էր, որ գերեզ-
 ման մը չունեցաւ :

92 Նոյ .

Մ Ա Ղ Ի Կ Ը

Եթերին մէջ թափառող լուսեղէն գունտերու մէջ
 ամենէն շատ լուսինը կը սիրեմ եւ մանաւանդ նորա-
 ծին լուսինը : Աղջկան մը տոժգո՛յն գեղեցկութիւնը ու-
 նի նա, ամչկոտ և միանգամայն լուսաշո՛ղ, երջանկու-
 թեա՛ն կը նմանի, որ դեռ նո՛ր կը ծնանի վշտաց
 ստուերներուն մէջ :

Նախա՛մարդէն մինչ ցարդ՝ ամէն ոք հիացա՛ւ նորա
 վերայ և ամէն բանական էակ նորա գեղեցկութեան
 առջեւ ծնրադրեց : Բնութեան բանաստեղծութի՛ւնն
 է նա, որ միշտ հեռո՛ւ մնացած է նիւթեղէն շրթունք-
 ներու գգուանքէն, որ միշտ հիացուցած է, առա՛նց
 երբէք խորշոմ մը աւելցունելու իւր կոյս ճակատին
 վերայ : Երբ ահեղ փոթորիկներ կ'ուռնան մթնոլորտա-
 յին խաւերու մէջ, նա հանդարտ և անխռով՝ իւր յա-
 վիտենական ճամբան կը շարունակէ, երբ մութն ու
 խաւար պատեն զերկիր, նա՛ է, որ ամպերու մէջէն
 սեւ ու գորշ ամպերու՝ լուսեղէն վարսե՛ր կը յղէ ծո-
 վուն անեզրութեան մէջ մոլորած նաւակին, կամ ա-
 նապատի անսահմանութեան մէջ ուղեկորոյ՛ս ճամբոր-
 դին կ'ազատէ՛ զանոնք և կը փրկէ կորուստէն :

Եւ կը սիրեմ Մահիկը, երբ զնա ցոլացա՛ծ կը տեսնեմ Օսմանեան Հայրենեաց նուիրական դրօշին վերայ: Կը սիրեմ Մահիկը, քաջաց այն դրօշակը, որ ցայսօր իւր վեհ դիրքը կը պահէ՛ աշխարհիս վերայ: Կը սիրեմ զայն, ոյր վերայ սեւեռեցին Օսմանցի քաջեր իրենց ակնարկը և նորա համար զոհեցի՛ն իրենց արիւնն ու կեանքը:

Մահի՛կն է, որ անսահման դարերու մէջ ոտնակոխ եղած երկիրները հանդարտեցուց և հոն հաւասարութեան սկզբունքները մշակեց, նա՛ է ջահը, ուսկից լոյս կ'առնուն Արարիոյ խորերէն սկսեալ մինչեւ Կովկաս խաւա՛ր ազգեր, նա՛ է որ կը պահպանէ՛ զամեն ոք իւր գերագոյն հովանաւորութեան ներքեւ, նա՛ է լոյսը, նա՛ է կեանքը, նա՛ է հոգին հայրենեաց: Եւ այսօր, Օսմանեան փառապանծ գահուն վերայ՝ Երկնային Արեգական ցոլացուցիչը՝ իւր ձեռք բռնած Մահիկին նուիրակա՛ն դրօշակը, կը կառավարէ հայրաբար իւր հպատակները, կառաջնորդէ՛ զանոնք քաղաքակրթութեան իսէալին, առ որ՝ ամէն հայրենասէր սիրտ գոհունակութեան մրմունջ մ'ունի ամբառնալիք յաւէտ անկեղծ մաղթա՛նք մը խունկի՛ նման « Կեցցէ՛ Օսմանեան լուսազա՛րդ Մահիկը, և Կեցցէ՛ վեհափառ Արքայն ՍՈՒՂՔԱՆ ԱՊՏ-ԻՒԼ ՀԱՄԻՏ ՂԱԶԻ ԽԱՆ . . . »



Մ Ա Ղ Ե Ր Ո Ի Փ Ո Ի Ն Ջ Ը

Ճերմակ, թղթի ճերմակ պատանքին մէջ այլ եւս
կը ննջէ՛ր այն գեղանի՛ գիսակներուն փունջը . սըր-
տի մը վերայ կապուած՝ կը ննջէ՛ր անզգա՛յ այդ
սրտի բարախումներուն, որք զգացումներու փոթո-
րիկնե՛ր կը հանէին լանջքի մը ոսկերուտ կամարին
ներքեւ : Եւ այդ մազեր, որ մերթ զեփիւռիկին նը-
ւա՛ղ ցնցումներէն տարուբեր՝ լճակին մանտրաիկ ա-
լեկաց նման ալիքնե՛ր կը կազմէին՝ գգուելու համար
ամբիծ ճակատ մը, ոյր ետեւ դեռ հասած չէի՛ն վըշ-
տաց և թշուառութեան ալիքները, ուր թերեւս յոյսը
կայծ մը, սէրը բողբոջ մը եւ հոգին աստղի՛կ մի էին
տակաւին, այդ մազեր այժմ մե՛ծ հանգի՛ստը կը
հանգչէին, մեծ քո՛ւնը կը ննջէին, զի մկրատի մը ա-
նողոք սեղմումը վիճակած էր իրենց :

Եւ, ա՛հ, ալ տարիներու անկայուն վազքին մէջ
նոքա անտարբերութեա՛մբ պիտի դիտէին իրենց միւս
ընկերներուն ծծե՛լը, քամե՛լը տառապանաց և ա-
նէծքներու ճերմակ կաթը, և անհաղո՛րդ պիտի մը-
նային իրենք բաղդին ձիւներուն ներքեւ ալեւորելէ . . . :


Ուրեմն հո՛ն սրտին վերայ՝ թող մնան յաւիտեան :

Այլ, ո՛հ ի՞նչ կ'ըսեմ . . . :

Նուիրակա՛ն յիշատակ, մի՛ կարծեր, թէ յաւիտ-
եան ազա՛տ պիտի մնաս ժամանակի ցո՛ւրտ շունչէ՛ն,
մի՛շտ հանգիստ, տա՛ք սրտի մը վերայ պինդ ու սեղմ,
խաղաղիկ և հանդարտիկ : Մի՛, մի՛ կարծեր այդպէս :
Մի՛ որ այն սիրտն ալ յիշատա՛կ մը կը լինի, մահու
ճերմակ պատանին մէ՛ջ փաթթուած, երկրի սրտին

վերայ պինդ ու սեղմ, քեզ պէս նա՛ ալ բաժնուա՛ծ
 իւր ընկերներէն, հնձուա՛ծ մահու սո՛ւր մանգաղովը,
 որ իւր շիրմին խորերէն անտարբերութեա՛մբ պիտի
 դիտէ իւր ընկերներուն ծծե՛լը կեանքի ճերմակ և մա-
 հաբո՛յր կաթը, և հոն քեզ հետ պիտի նիրհէ՛ յաւիտ-
 եան

92 Նոյ.



Բ Ա Ժ Ա Ն Ո Ի Մ Ը

She doubted long on the
 eve of departure

* * *

Աղօ՛տ կայծ մը պատուհանին առջեւ, աղօտ լոյս՝
 մ'ալ երկնից վերեւը զիրար կը դիտէին այն պահուն :
 Լուսած էին ցերեկին աղմուկը և խուժանին ըմբոստ
 ձայներն, և երկիրը իր սեւ պատանքին մէջ կծկուած՝
 կը նիրհէր տժգոյն մեռելէ մը աւելի՛ հանդարտ, ա-
 ւելի անզգայ և այդ մութ աղջամուղջին մէջ, օդային
 գաւառներէ անդին, եթերաց մէջ աստղիկ մը կը պըլ-
 պըլար, լացող կոյսի մը աչերուն պէս բացխըփիկ, և
 լուսոյ կաթիլներ կը սահեցունէր և պատուհանին եզ-
 րը աղօտ լոյսը կը դողդղար, օրհասականի շունչին նը-
 ման բան մը, անյագարար ծծելով իւրի մնացած մի
 քանի կաթիլները, ինչպէս հոգին սարսուռով մը հար-
 ցունե՛լ կը ջանայ կեանքի տժգոյն հաճոյքը, անձառ
 երանութեա՛մբ մը . . . :

* * *

Սակայն առ երեւոյթս հանդարտ այդ ընդհանուր մեռելութեան մէջ ուրիշ տիեզերք մը կար, ուր Ովկիանու գորշ ալիքները իրերաց բաղխելով կը գոռային որոտնդոստ, ջուրերը անյագ կատաղութեամբ մը մութ ամպերու ծոցէն կայծի նշոյլ մը խլելու տենջանքովը լիազեղուն կը պատռէին նոցա մութ խորշերը և կը քաշէին օձապտոյտ հրափայլակները, որք նարօտներու նման մերթ կը պսակէին այերաց և ջուրերու այդ խառնակ միացումը և մերթ փայլուն նիզակաց նման կը պատռէին Ովկէանին թխալայորդ ալիքները կը թաղուէին անդունդին ալուցը մէջ և յուսահատի վերջին սլորոչըտուքը արձակելով կը լռուէին: Եւ խօ՛ւ քամին այդ հոսանուտ ձիերուն վերայ հեծած չէր դադրեր մտրակէ զանոնք, որք կենդանիի մը զգայնութեամբ ցաւոց ճիչե՛ր կը հանէին և կը հեծէին՝ ողբագին: Եւ այդ ջրոյ լեռներուն վերայ թերեւս կեանքի պահապան տախտակ մը կը ծրփար հողմատատան, գոգցես վայրենւոյ մը ընդոստումներով, կամ գինովի մը դեղեւումներով:

* * *

Եւ, ո՛հ, ներէ՛ ինձ, ո՛ կսւսիկ, եթէ ըսեմ թէ քու սիրտն էր այն տիեզերք, սէրն էր Ովկէանը, քամին տարակոյսը և յոյսը՝ նաւա՛կը:

Օ՛հ, տակաւին սիրտդ բաժանման տագնապին մէջ էր այն ատեն: Եւ շրթներդ դողդոջուն և հրատապ, դեռ նոր ըմպած սիրոյ նեկտարը ցո՛ւրտ բաժանման համրոյրին ներքեւ ընկճած դալո՛ւկ մի, կապո՛յտ գծով մը պարփակեալ, հագած էին, և ո՛հ, կը կափկափէին տակաւին միմեանց, կը դողդղայի՛ն տակաւին կը լռէի՛ն տակաւին:

Եւ դու արտասուածաթա՛ց թաշկինակդ բռնած ա-
չերուդ վերայ, կոյս արցունքներդ կը սրբէիր, և
տխու՛ր շարժումով մը անցեա՛լդ կերագէիր:

Դեռ մի քիչ առաջ հո՛ս էր նա, կը մտածէր, և
քու աչերդ աղօ՛տ կանթեղին ելուշիջմանը կը յա-
ռէիր... նա տե՛սած էր զձեզ, նա վկայա՛ծ էր ձեր
սիրոյն:

Օ՛հ քանի՛ տխուր է սիրել և բաժնուիլ... քանի՛
տխուր է ծնիլ և մեռնիլ...:

Եւ այն կանթե՛ղն էր ձեր սիրո՛յն պատկերը:

Վայրկեան մը բոց, ըսպէ՛ մը յոյս, մռա՛յլ մը ան-
հուն, անյուսու թի՛ւն յաւիտեան:

* * *

Եւ այն գիշերը, կ'ըսեն թէ, պատուհանի մը մէջ
կանթեղ մը կը պլպլար, երկնքն էր որ կուլար:

Որո՞ւ համար արդեօք:

92 Ապրիլ

Ա Ն Ջ Ն Ա Ս Պ Ա Ն Ը

Առ ՏԵ՛ Լ՛ Բաւալեան

Եւ ուղեղի այն քառսին մէջ հետզհետէ երեւան
գալ սկսաւ անէծքի դրութիւնը, նախանձը՝ իւր ար-
բանեակներով, արծաթասիրութիւնը, ագահութիւնը
և գինեմոլութիւնը, որոց կեդրոնը կը կենար կեան-
քի ձանձրոյթը, իբր կառավարող արփին այդ ան-

հո՛ւն դրութեան որ կ'ամփոփուէր պզտի'կ, հիւլէ
 գանկի մը մէջ: Եւ անսանձ խոհեր մերթ ընդ մերթ
 կ'ամսւոտէին այն ճակատը, կը պլլուէին մկանանց ման-
 րաթեւներուն, և հոն մի օրինակ գոյն մը կ'արտադ-
 րէին, սեւ գոյնը, — քառսին գոյնը: Եւ հոգեկան
 վսեմ կարողութիւններ այլ եւս լոյծ և անկերպարան
 վիճակի մը հասած, փոքր առ փոքր կ'ընկճէին՝ մար-
 մինը, որ քայլամուրձ կը շրջէ՛ր անընդհատ գերեզ-
 մանին բոլորը, ուր մարդը՝ կէտ մը կը լինի և սէրը
 յիշատակ մը: Աշխարհի հորիզոնէն՝ աւելի հեռուն
 դժոխքի հորիզոնը կ'ընդհնամարէր նա, ուր յաւիտե-
 նական բոցեր կ'թրթռային և օձերու պէս կը գա-
 լարուէին, ուր յոյսեր մոխիր կը լինէին և անյուսու-
 թի'ւնը կը վառէր, ուր հիւլէ — կեանքը դարերու
 անեզրութեան վերայ կ'ոստոստէր:

Ջիւերն համօրէն կը թրթռային միակերպ, և ա-
 չերուն մէջէն, կարմի'ր աչերուն, գանկի խորու-
 թեանց մէջ թաղուած գերեզման մը կը տեսնուէր,
 աննման բոլորովին այն գերեզմանաց, որք կան երկ-
 րի վերայ, և որոց մէջ կը փոշիանան, կ'անգայտա-
 նան սիրտը և սէրը, աշխարհն ու երջանկութիւնը,
 ժպիտն ու արտասուքը. շիրիմ մը, ուր մեռած, կը-
 մախացած, չորցա՛ծ էր յոյսը...: Եւ հետզհետէ խո՛ր
 և խուլ նայուածք մը կը շրջաշրջէր նա իւր բոլորտիքը,
 և յոռետէսի մը զգացած համակ և մնայուն վիշտերն
 իւր թուքին հետը խառնած, իւր կափկափուն ակ-
 ոաներուն մէջէն հէգնութիւն մը կը թքնէր, եւ իւր
 դողդոջուն շրթներուն մէջէն անէ՛ծք մը կը մրմռար:
 Յիմա՛ր մարդ:

Թերեւս անցելոյն մէջ մի շատ գիշերներ տքնե-

ցաւ նա ի սէր հարստութեան և բարդ առ բարդ դիզեց ոսկի և արծաթ, թերեւս մի շատ օրերու մէջ երջանիկ բոպէներ եկան վշտաց սե՛ւ ամպերու մէջէն կաթիլ կաթիլ գլորեցան, իրենց հետ երկնից բուրմունքը բերելով կեանքի չո՛ր և ամայի դաշտին վերայ և անգայտացան ընդ փոյթ:

Այլ, ո՛հ, տար յոռետեսին այդ բաները և նա ցուրտ քրքիչով մը միայն պիտի դիմաւորէ զնոսա: Նորա համար կրօնը պատի՛ր մ'է և ապագան՝ երազ, յոյսը ցնորք մ'է, հաւատքը երեւակայութիւն, կեանքը նախճի՛ր մ'է և սէրը՝ գերեզման:

* * *

Իրիկուն մը, ձմրան ցո՛ւրտ իրիկուն մը, հովերը կ'երգէին և ձիւնի գնդակներ կը պարէին և կ'ոստոստէին: Մերթ ընդ մերթ նուա՛ղ է և աղօտ լոյս մը կը թրթռար և կը մարէ՛ր մութ գիշերին ծայրագոյն սահմանները չհասած, և մարդկութիւնը այդ մութ վերմակին ներքեւ և մանիչակներ, ճերմա՛կ սաւանի մը տակ կը նիրհէին անդորր ու խաղաղիկ... միայն ցուրտ քամին իւր յաւիտենական սո՛ւր յանկերգը կը կրկներ, յուսահատի մը յամառութեամբը, միշտ և շարունակ:

Եւ դողդոջուն քայլերով, մութին և մռայլին մէջէն մեր յոռետեսին թերաստուերը կ'անցնէր ու կ'երթար, տակաւին անիծելով, տակաւին հառաչելով և տակաւին ողբալով: Ի զո՛ւր ձիւնի գնտիկներ կուգային զարնուիլ նսրա խամրած և ալեթարչամ ճակատին, որոյ ետին զգացումներու քառսը կ'եռար ու կը փայլատակէր, ի զո՛ւր ցուրտ քամին կը ջանար նո-

րա ոսկերաց ծուծին մէջ սարսուռ մը ազդել, մահ-
ուան ցուրտ և յաւերժական սարսուռին իբր նշան . . .
կատաղի գազանէ մը հալածուած մարդու մը դողե-
րովն ու արագութեամբ, իւր ետին թողած անմեղ
մանուկներ, իւր ետին թողած ոսկի ու արծաթ
կ'երթար նա, անյուսութեան շղթայն բռնած անի-
ծե՛լ ու մեռնիլ, մեռնիլ՝ ու անիծուիլ:

Տարօրինակ տենդ մը բռնած էր նորա մարմինը
համակ և հրատապ տե՛նջ մը նորա հոգին ու միտքը,
մեռնելո՛ւ, մեռնելո՛ւ:

Եւ հետզհետէ հոգեբանական յուզմանց արտա-
փայլումներն կ'ակօսէին նորա ականարիլը, որ կը շո-
ղար մութի ու մռայլի այդ թանձր վայրագուրին
ներքեւ:

Փոքր ինչ յետոյ սենեկի մը մէջ կը գտնուի նա:
Հետեւինք նմա: Դողդղացող մոմի լոյսին վերայ ծը-
ռած, կը գրէ նա իւր յետին տպաւորութիւնները,
յետին կամքը: Մերթ ընդ մերթ կը կենայ և իւր
ցո՛ւրտ մարմինը տաքցնելու համար գինիին կը դիմէ
և խելմորած աչերը սլատերու վերայ գտնուած մէկ
բացատէն կը սեւեռէ մութ մութ ամպերուն, որոց
ետին կը պառկի մեղկօրէն կասկո՛յտ անհունութիւնը
և հառաչներու հետ ումպ առ ումպ կը կլլէ, կը ծը-
ծէ՛ գինին, որ թմրիր մը կ'ազդէ ջիւերուն և նա
կը գրէ ու կը խմէ, գրչի սարսուռներով թղթին վե-
րայ հոգւոյն սարսուռները կը նկարէ և կ'արտասուէ՛
կաթիլ կաթիլ, բոցատապ և հրդէհագին: Գինին կը
ներգործէ ուղեղին, և նորա գործողութիւնները
դադրել կը սկսին և նա անբանի մը կը փոխուի . . . Եւ
հիմա որոնէ՛ այդ խոժոռագէմ արարածին մէջ մայ-

րիկի մը համբոյրներուն ներքեւ խայտացող երբեմնի երջանիկ և արփիագեղ հրեշտակը : Փնտռէ՛ այդ յիմարին մէջ ծնողական սիրոյն յետի՛ն կաթիլը : Եւ որոնէ՛ այդ թարշամեալ ճակտին ետեւ յուսոյ վերջին նշոյլը . . . : Եւ դու ոչի՛նչ պիտի գտնես , ոչի՛նչ . . . : Եւ նա կ'եւէ , կը հանէ՛ իւր ծոցէն երկա՛ր պարան մը , դողդոջելով կը կապէ զայն առաստաղին և կ'իջնէ վայրիկ մ'եւս ծծելու համար օդն ու կեանքը և երջանկու թիւնը . . . : Եւ կը պտտի նա ընդ երկար , վարժեցնելու համար իւր միտքը կեանքի այն անարգ վախճանին , կախաղանի անա՛րգ մահին :

Ի զո՛ւր խիղճը վերջին անգամ մ'ալ կը պատկերացունէ ներկայ անպատուութիւնն ու ապագայ պատիժը :

Ի զո՛ւր իւր աչաց առջեւ կուգան սեւ դագաղը , սեւազգեաց քահանան , որ իւր թաւ և խռպոտ ձայնով մեռելոց ախո՛ւր և սոսկալի շարականը կը մըրթմըրթայ , ի զուր անմե՛ղ սիրելիներն կ'երեւնան նորա աչաց . . . : Գինիին կարմիրին ետեւ , գինիին թըմբիրին ներքեւ կը լռեն ամէն ինչ , կ'անհետանա՛ն ամէն ինչ : Եւ կեանքի ձանձրոյթը աւելի ուժգնութեամբ կ'ըսկսի կրծեւ նորա սիրտը , կրծե՛ւ նորա հոգին . . . : Եւ յուսահատ շարժումով մը և վերջին շարժումով մը կը դնէ իր վիզը հանգուցաւոր ճօպանին մէջ , և ուտումով մը կախուած կը մնայ օդին պարալութեանը մէջ , կ'երերայ և կ'պտուտկի հոն խո՛ւլ եծեծանքներ խեղդելով իւր կոկորդին խորը :

Ա՛յդ էր ուրեմն , անբա՛ղդ յիմար , կեանքի վերին նպատակը , ա՛յդ էր նորա վախճանը . . . : Ի՞նչ բա՛րի ծառայեցին քու քրտինքով դիպած ա՛յնչափ հա-

ըրստութիւնները, Ո՛հ, ի՞նչ օգուտ ունեցան հարիւրաւոր ոսկիները, զորս այնքան փայփայանօք կը պահէիր:

Եւ չուանը օդին մէջ խօլ պտտկումներով կ'երերարար, և նա կախուած այդ չուանէն, խռպոտ հեծեծանքներ կ'արձակէր:

Ըսէ, անբաղդ յիմար, ըսէ, թէ երբ մոգակահան լապտերի մը ցոլացուցածին նման քու ամբողջ անցեալ կեանքը եկաւ քու առջին, այն պահուն, յորում հոգիդ խոյս տալ կը ստիպուէր իւր կաւեղէն բնակարանէն, չզղջացի՛ր արդեօք քու ըրած վերջին եպերելի գործոյդ համար, չը փափաքեցա՛ր անգամ մ'ալ ապրի՛լ աշխարհի վերայ և ապրիլ իբր մարդ:

Ըսէ՛ սիրելի՛ յիմար, թէ արդեօք ոչինչ չերեւցա՞նք քու քրտինքն ու աշխատութիւնները, և նոցա արդիւնքները, երբ մահու քրտինքը ոլոռ ոլոռ ճակատիդ վրայէն կը գլորտըկէր...: Եւ գացիր դու անյոյս և վհատ, հասկնալու մեծ հարցումին պատասխանը, և շօշափելու՝ ահե՛ղ Անծանօթը:

Մումը մարեցաւ վերջին փայլով՝ մը, յիմարն ալ մեռա՛ւ վերջին հեծեծով մը:

Աստուած գիտէ, թէ ո՛ւր գնաց նա, միայն մարմինը մնաց չուանին վերայ, երերալով օդին մէջ, գինիի գաւաթին վերայ, անշունչ և անկենդան:

* * *

Այսօր գիւղի գերեզմանատան մի անկիւնը հողակոյտ մը կայ, որոյ շորս գին ծաղկունք փթթին, վայրի՛ վայրի՛...: Նախկին հրեշտակին և ասպագայ ճիւղին շիրիմն է այն, որ մեռելներու աշխարհին

մէջ իսկ մեկուսացած արհամարհանքով մը կը սարսըռայ կը մրմռայ . . . — « Անկ՛ճք » :

92 Դեկտ.

Վ Ե Ր Ջ Ի Ն Տ Ո Ղ Ե Ր

Սիրելի Ծնողք իմ

Յ Ե Ր Կ Ի Ն Ս

Ահա իմ վերջին տողերը մանկական անմեղ վստահութեամբ մը՝ կ'ուզուեմ Ձեզ, որ ալ աշխարհի վերայ չէ՛ք: Ո՛ր գիտէ, թերևս անմահ ուրախութեանց մէջ մոռցա՛ք Ձեր տառապեալ ու վշտահար սրդին, զոր, աւանդ, ո՛րք թողուցիք: Եւ երազներու մէջ ի վ՛ր կ'որոնեմ հայրենի տան մէջ Ձեր սիրելի պատկերները:

Ո՛ւր էք հիմա արդեօք:

Դրական իմաստասիրութիւնը անմրմունչ փոշի՛ն միայն կը ցուցունէ, իսկ Աւետարանը՝ վերը լուսաւոր կէ՛տ մը, զոր երկինք կ'անուանեն: Եւ ես, հաստատ հաւատալով վերջնոյն մռայլ գիշերներու մէջէն շատ և շատ անգամ կը սեւեռեմ իմ աչերն այն յաւիտենական աստղիկներու բոյլերուն, և իմ երեւակայութեամբ պտոյտ մը ընելով այդ անհուն միջոցին մէջ, կը զգամ տեսնե՛լ Ձեր անուշի՛կ դէմքերը . . . : Ո՛հ, չիք ինձ համար տարակոյս, թէ կ'ապրիք դուք:


զի անկարելի է որ ծնողական սիրոյ այնքան սուրբ զգացումները նիւթին ու կաւին հետ փոշիանան, անյայտանան... : Եւ հաւատքին ալ անմիջապէս կը յաջորդէ յոյսը, որ մեղմ ձայնով կը փսփսայ իմ ականջին — « Ապագան : »

Ո՛հ, կը զգամ արդէն այն փառաւոր օրը, յորում Ձեր բազկացը մէջ պիտի մոռնամ իմ կրած վիշտերը լիովին, և իմ Փրկչին տուած անմահութիւնը պիտի զգենում... և կը հաւաամ, թէ մօտ է ալ :

Այսօր պատանեկան զգացումներու փունջս « Յիշատակաց Ծաղիկներ » անուան ներքեւ Ձեր գերեզմանին կը նուիրեմ :

Ձեմ գիտեր, թէ գրական մարդիկ ինչ դիտողութիւն պիտի ընեն, եթէ կարդալ յանձն առնուն այս թերի գործը, այլ գիտեմ սաչափ, թէ դուք պիտի ուրախանաք և հրճուանքով մը զոր մանկութեանս ժամանակ ցոյց տալ սովոր էիք իմ մրտած կտոր մը թղթին ի տես, պիտի սարսռաք երկնից ու գերեզմանին մէջ և մրմնչէք — « Ապրի՛ս » ... :

92 դեկտ



(Յե՛սայայ երկու ռսանաւորները իմ քարեկանաց
Սողիկեանի եւ Չարդարեանի ծաղկահիւս սողերէն
են, զոր իմ խնդրանօք տուին հոս դրուելու համար :)

Խ Ո Ս Տ Ո Վ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Թռչի մեղուն ծաղկէ ծաղիկ
Հստ հաճոյս

Հաւն համբուրէ, վատէն մեղմիկ
Կուտայ խոյս :

Թէ սմբուլին, թէ բաղեղին
Կ'ընէ այց,

Մէն մի ծաղիկ կուտայ սրտին
Սիրոյ կայծ :

Եւ ոչ որպէս լալկան սոխակ
Միմիայն

Վարդին ձօնէ կեանքն համակ
Սէրն համայն :

Կուսիկ, և ես ունիմ մեղուին
Բնութիւն

Հոկ դու չես որ տաս իմ սրտին
Տրոփիւն :

Ես կը սիրեմ ուր որ գտնեմ
Մի բարի,

Ազնիւ, անոյշ և գեղադէմ
Ու արի

Աշխարհի մէջ գեղեցիկներ
Որչափ կան,

Ի՞նչու համար զոհեմ իմ սէր
Քեզ միայն :

Մենաշնորհն գեղեցկութեան ,
 Ունի՞ս դու ,
 Ով գեղեցիկ՝ է նա արժան
 Սիրուելու :
 Ես կը սիրեմ շատ ծաղիկներ
 Կենդանիք ,
 Կարմիր ճերմակ քնքուշ վարդեր
 Ու յասմիկ :
 Ես կը սիրեմ հերիկ , Շուշան
 Մանիշակ ,
 Հարսնուկ , սմբուլ նարգէս ու հան
 Եւ մեխակ :
 Եւ կը սիրեմ , ո՛հ , Արշալոյս
 Արեգակ
 Լուսնթագ և փայլածու լոյս
 Արուսեակ :
 Ես կը սիրեմ զերկին , ամպեր
 Ծիածան ,
 Մայիսն անուշ և ծաղկահներ
 Ժմտացուն :
 Ես կը սիրեմ զմարգարիտ
 Ծով կապուտ ,
 Գառն , Աղաւնին , զայեր վճիտ
 Եւ թաւուտ :
 Նուիրած եմ սիրտս ու քնարս
 Գեղեցկին ,
 Ի՞նչ փոյթ թէ բոյս ըլլայ թէ քար
 Կամ թէ կին :
 Ըսի , ահա՛ , գաղտնիքս ամէն
 Քեզ , ո՛ր , կոյս ,


Թէ սէրդ ու գեղդ զիս պիտ' գերեն
 Լեր անյոյս ,

Ազատարար բան մ'ալ ըսեմ
 Կը ներե՞ս ,

Հիմա զբնութիւնն շատ կը սիրեմ
 Քան զքեզ :

ԿԱՐԱՊԵՏ ՍՕՂԻԿԵԱՆ

90 Նոյ . 8



Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ն Ե Ր Է Ս

Առ Ռ . Որբերեան

[« ԻՄ ՍԻՐԱԾԸ » ԻՆ ԱՌԹԻԻ]

Այլք սիրեցին ցուրտ լուսնակ ,

Յոյսեր , երազ գողդ ոջուն ,

Կամ Ալիքներ անյատակ ,

Խենդ փրփուրներ գոյնգգոյն ,

Սիրեցին կոյս ու արեւ ,

Անդուկնդ աստղեր ահա լի ,

Կամ աշխարհի մերկ տերեւ ,

Որ սուգի մէջ կը հալի :

Սիրեցին վարդ , ցօղ , ծաղիկ ,

Դաշտե՛ր անհունն երկարող ,

Այն պատանին ալ տոհմիկ ,

Որ շատ զարդնուլ էր կարող :

Երբ ամէն ոք՝ այս կեանքէն ,

Աւար մ'առած կը քալէ՛ ,

Դո՞ւ ունիս լոկ այնքան քէն
Առ այն որ շող ու փայլ է :

Երբ այլք այսպէս կը վազեն՝

Արծիւ, բազէ ընտանի ,

Սեւ անցեալի երազէն

Ի՞նչ կ'ուզես խեղճ պատանի :

Յիշատակն ալ կը հատնի

Գերեզմանին մէջ անդունդ

Ուր հոգիներ պատանի

Կզգան սառսուռ , մահուան թունդ :

Ի՞նչու կուլան քնարիդ

Շեշտերն նուրբ , անմարմին

Որք երգեր են ճշմարիտ

Թէ շիրմին քով չի խամրին :

Ես ալ երբեմն ուզեցի

Ըլլալ խանձող մի դժբաղդ

Այրե՛լ , բաղձանք կանացի ,

Ըլլալ սեւ մուխ մը անյաղթ :

Եւ ուրուական երկնային

Մտնել երկինքն լոյսերուն ,

Անանց սահմանքն Անմահին ,

Որք կը դողան վախերնուն :

Հատնի՛լ , միսա՞լ շարունակ ,

Կրակն իմ մէջ միշտ գաղտնի՝

Ոչ ոք տեսնէր բարունակ

Ցաւն որ ինձ էր յայտնի :

Այլ երբ տեսայ թէ հեռուն

Կը փայլիլըլար կը վազէր ,

Սիրոյ կեանքի ջինջ առուն
 Երկինք նետած էր մաղեր ,
 Թողի ծուխ , հուր և ցաւեր ,
 Սրտի յոյզեր , տուայտում ,
 Եւ փարեցայ կիսաւեր
 կեանքին սիրով անհատնում :

* * *

Պահել պէտք չէ մութ սրտին մէջ
 Ցաւ , բաղձանքներ և կամ երազ ,
 Զի ամբոխը միշտ սնամէջ
 Պիտի ըսէ « յիմար մ'ալ աս » :

Երգէ' , քանի հովերը ցուրտ
 Սա սեւ կեանքին սկսած չեն
 Դիզել ամպեր ի խորն հոգւոյդ
 Ամպեր , ցաւի նեխած լիճէն :

Անմեղ ծիծռան մը պէս անցիր ,
 Գարուն կեանքի հորիզոնէն
 Երգերդ ըլլան ճիշեր ցանցիր
 Գերեզմանդ ալ բոյն մը խոտէն :

Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

92 Նոյ . 26

Վ Ե Ր Զ


Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Ց

Յառաջարան	1
Կենաց գգուանքն ու զգուանքը	7
Առ լուսինն գիշերոյ	9
Արցունքի կաթիլներն	10
Լուռ	13
Դարձեալ նրան	14
Ծնունդ	15
Լամարթինայ քնարը	15
Դպրոցական պանդխտին մահը	19
Վհատին սիրտը	20
Մեռելին երգը	23
Ճշմարտութիւնն	24
Նկար եւ իղձ	28
Պսակ մի արտասուաշաղ	30
Առ մենութիւն	32
Ներա ծննդեան տարեդարձին առթիւ	35
Յիշատակ	36
Ընդէր ապրիմ — Ընդէր մեռնիմ	35
Իմ սիրածը	41
Սիրոյ գերեզման՝ սիրտը	43
Աւ մի լար	44
Հնչեակ «վստահ եւ յաւիտեան»	45
Ներա համար	47
Մի կարծեր	49
Գերեզմանը	51
Կոյսին հոգին	51
« Մի մոռնար զիս »	53
Զմրան օր մը	54
Իւր գերեզմանը	57
Մասն երկրորդ Արձակ գրուած	58
Սիրոյ ծաղիկ — արփին	61
Մահիկը	63
Մազերու փունջը	64
Բաժանումը	66
Անձնասպանը	72
Վերջին տողեր	74
Խոստովանութիւն	76
Յիշատակներէս	76


Վ Ր Ի Պ Ա Կ Ք


Երէս	Տող	Սխալ	Ուղիղ
14	8	Ճիւղ	Ճիչ
16	6	Կ'արձագանգեն	Կ'արձագանգէր.
19	3	Մեղմագոչ	Մեծագոչ
19	7	Գութը	Գուբը
21	9	Խառնէր	Խառնես
22	2	Եւ	Ես
22	6	»	»
24	2	Ըսեն	Ըսին
24	8	Եղաւ	Իջաւ
24	20	Տապան	Տատան
26	11	Լ	ես
32	8	Տխրեցայ	Տիրացայ
36	15	Գտանիմ	Գտանեմ
41	2	Եմ	Իմ
41	14	Մընան	Մընայ
43	12	Գլորին	Գլորեն
45	8	Ջուրին	Ըստին
54	7	ԳԵՐԵՋԱՆԸ	ԳԵՐԵՋՄԱՆԸ
55	7	չսիրոյ	զսիրոյ
55	14	Տեւ	Տես
56	6	Սրտսւ	Սրտիս
64	17	Հարցունել	Հատցունել





[The page contains faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the paper.]





ԿԱԶՄԱՏՈՒՆ Ա. ԲԱԴԴԱՆՈՅՇ

ATELIER DE RELIEUR
A. PAGHTANOUCHE

Тчакмакджилар бейук җени һан 5-6

Համապատասխան Մեծ և ուր թան Թ. Ի. 5-6

5746
5747
5748
5749
5750
5751

2013



